

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՆԵԼԼԻ ԱՇՈՏԻ

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ

ՀՀ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (անգլերեն լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝
մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
Կ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան որպես լեզուների ուսուցման գլխավոր նպատակ 11

1.2 Միջմշակութային հաղորդակցության հիմնախնդիրները..... 22

ԳԼՈՒԽ 2. ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2.1. Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի ստեղծման միջմշակութային հաղորդակցության սկզբունքը..... 37

2.2. Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի վերլուծության հիմնախնդիրը՝ տոների և ավանդույթների տեսանկյունից..... 68

2.3. Ուսուցման գործընթացում անգլերենի դասագրքերի արդյունավետության փորձարարական ստուգումը..... 83

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 111

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 113

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... 123

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից դպրոցին ներկայացվող պահանջները և աշխարհաքաղաքական զարգացումների արդի ընթացքները հանրակրթությանը թելադրում են որոշ դրույթների վերանայման անհրաժեշտություն, ուսուցման ձևերի, եղանակների, միջոցների ընտրության հարցում նորովի մոտեցումներ, նորագույն տեխնոլոգիաների բաղադրատարրերի արդյունավետ կիրառում և այլն: Հարցադրումների նման համատեքստում անհրաժեշտություն է ծագում վերանայել անգլերենի դասագրքերը, մասնավորապես՝ բովանդակային առումով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիտելիքների յուրացման հիմնական աղբյուրը դասագիրքն է:

Հայտնի է, որ դասագրքերը կառուցվում են ըստ պետական չափորոշի և ծրագրի , և ամեն մի դասագիրք նախ պետք է համապատասխանի գիտության ժամանակակից մակարդակին, նաև պետք է բխի արդիականության հրատապ հարցից՝ զարգացնող կրթության պահանջներից:

Այս լույսի ներքո անգլերենի ուսուցման գործընթացն անհնար է պատկերացնել առանց այնպիսի դասագրքերի, որոնք կոչված են աշակերտին փոխանցելու անհրաժեշտ տեղեկատվություն հոգևոր, մտավոր, ֆիզիկական մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև լայն պատկերացում տալու համապատասխան երկրների, ժողովուրդների, հայրենիքի աշխարհագրական բնութագրի և պատմության առանձնահատկությունների մասին:

Դասագիրք կազմողները անգլերենին լավագույնս պետք է տիրապետեն ոչ միայն հաղորդակցական մակարդակում, այլև հաշվի առնեն բազմամշակութային և բազմալեզվյան տեսությունների շրջանակներում ձևավորված հայեցակերպերը, որոնց հիմքում ընկած է միջմշակութային հաղորդակցության ուսուցման մոտեցումը: Վերջինս ներառում է սեփական և օտարալեզու մշակույթների ընդհանրության և բազմազանության գիտակցում: Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մշակութային բովանդակության գիտելիքներին համահաղորդ կամ

իրազեկ դառնալու առավել արդյունավետ միջոց է ոչ թե Հայաստանի և անգլախոս երկրների պատմական իրադարձություններին, մշակույթին, աշխարհագրությանը ծանոթանալը ուսումնական աշխատանքի որոշակի ժամանակահատվածում, այլ տվյալ թեմաների շուրջ հաճախ հաղորդակցվելը: Նման գործընթացը նպաստում է ձեռք բերելու համապատասխան գիտելիքներ ուսուցանվող երկու երկրների վերաբերյալ, օտար լեզվով հաղորդակցվելու այս կամ այն մշակութային թեմայով և տվյալ թեմայի շրջանակում հարստացնելու անհրաժեշտ բառապաշարը և այլ լեզվական միջոցները: Նման աշխատանքների շնորհիվ ձևավորվում է լեզվամտածողության որոշակի համակարգ, որը հետագայում կհանգի բազմոլորտ ընդհանրացումների: Այս ամենը լավագույն պայման է միջմշակութային հաղորդակցման համար, որն այսօր գնալով հրամայական է դառնում: Այսօրինակ աշխատանքներ կարելի է իրականացնել հանրակրթական դպրոցներում, հատկապես 5-9-րդ դասարանների աշակերտների հետ: Այստեղ կարևորագույն գործոն է դպրոցական դասագիրքը, նրանում ընդգրկված լեզվանյութը և միջմշակութային տեղեկատվությունը:

Ներկայիս դասագրքերը հաճախակի ենթարկվում են փոփոխության. համապատասխանաբար փոփոխվում է նաև նրանցում ներառած ուսումնական նյութը: Ուսումնասիրելով միջին դպրոցի անգլերենի դասագրքերը՝ եկանք այն համոզման, որ միջմշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից առկա են որոշակի բացթողումներ՝ կապված թե՛ տեքստերի և թե՛ տեքստերին հաջորդող վարժությունների համակարգի հետ: Երբեմն նպատակապաշար չի կիրառվում միջմշակութային հաղորդակցական կոմպետենցիան: Ըստ ժամանակակից պահանջների միջմշակութային հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորելու համար հարկ է դասագրքերում զուգահեռաբար անդրադառնալ անգլախոս երկրների և Հայաստանի մշակույթները ներկայացնող տեղեկատվությանը, քանի որ առանց դրա երկու և ավելի լեզվակիր երկրների մշակույթների երկխոսություն չի կարող իրականանալ:

Ուստի բազմակողմանի զարգացած և գրագետ սերունդ դաստիարակելու համար հարկ է նրանց ապահովել այնպիսի դասագրքերով՝ հագեցած բազմաբնույթ մշակութային և տեղեկատվական այլ ուսումնական նյութերով, որոնք ուղղված են աշակերտների միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիայի զարգացմանը: Այսպիսի հաղորդակցությունը ապահովում է անձի ոչ միայն բազմակողմանի զարգացում և կայուն գիտելիքների ձեռքբերում, այլ նաև կյանքի հմտությունների ձևավորում: Սրանք են զարգացնող կրթության՝ այսօրվա դպրոցի առջև դրված խնդիրները: Այս ամենով պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը, որի համատեքստում ձևակերպվել են նրա նպատակն ու խնդիրները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ է բացահայտել միջմշակութային հաղորդակցության հայեցակերպը ՀՀ միջին դպրոցի անգլերենի դասագրքերում և մշակել միջմշակութային ուսուցման մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆ անգլերենի ուսուցման գործընթացն է ՀՀ միջին դպրոցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՀՀ միջին դպրոցի անգլերենի դասագրքերում ստեղծված հայեցակերպի հիման վրա միջմշակութային հաղորդակցության զարգացման մեթոդական համակարգն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Անգլերենի դասագրքերի ստեղծման գործընթացում առաջին պլան է մղվում հաղորդակցական և զուգահեռաբար միջմշակութային հայեցակերպը, քանի որ, ուսումնասիրելով թե՛ հայկական, թե՛ օտարալեզու մշակույթները, աշակերտները կկարողանան հաղորդակցվել հավուր պատշաճի:

Ուստի միջին դպրոցում միջմշակութային հաղորդակցության մակարդակը կբարձրանա, եթե՝

- կատարվեն համապարփակ վերլուծություններ ժամանակակից հաղորդակցական մեթոդիկայի պահանջներին համապատասխան,

- մշակվեն միջմշակութային հաղորդակցության ձևավորման հայեցակերպային դրույթներ,
- մշակվի միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան զարգացնող տեքստերի և վարժությունների համակարգ,
- ներդրվեն միջմշակութային հաղորդակցությանն ուղղված ուսուցման նոր ռազմավարություններ:

Ելնելով հետազոտության օբյեկտից, առարկայից և վարկածից անհրաժեշտ է լուծել հետազոտության հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան՝ որպես օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակ:
- Բացահայտել «միջմշակութային հաղորդակցություն» հասկացության էությունն ու սահմանումները:
- Վերլուծել միջին դպրոցում գործող անգլերենի դասագրքերը և ճշգրտել դասագրքերի ստեղծման սկզբունքների ձևավորման օրինաչափությունները միջմշակութային հաղորդակցության զարգացման տեսանկյունից:
- Մշակել անգլերենի դասագրքերի ստեղծման և ներդրման արդյունավետությանը նպաստող միջմշակութային մեթոդական համակարգ, որը կնպաստի աշակերտների հաղորդակցական և միջմշակութային գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:
- Փորձարկել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ընտրությունը պայմանավորված է մեր ուսումնասիրության նպատակներով, խնդիրներով և առաջադրված վարկածով: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- **տեսական**՝ հետազոտության հիմնախնդրին առնչվող փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- **էմպիրիկ**՝ դիտարկում, աշակերտների անկետավորում, հարցում, թեստավորում, փորձարարական ուսուցում,
- **վիճակագրական**՝ թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ հիմքում ընկած են հետևյալ տեսություններն և հայեցակարգերը ներկայացնող աշխատությունները՝ հաղորդակցական-ճանաչողական (Մ. Գ. Աստվածատրյան, Ի.Լ. Բիմ, Ն. Դ. Գալսկովա, Գ. Տրագեր, Ի. Հոլլ, Վ. Վ Սաֆոնովա), հոգեբանամանկավարժական (Ա. Ա. Լեոնտև, Լ. Ս. Վիգոտսկի, Ի. Ա. Կայիրով, Վ. Վ. Կրանսկի), լեզվաբանական (Դ. Ս. Լիխաչով, Ա. Ֆ. Լոսև, Վ. Ի. Կարասիկ, Վ. Ա. Մասլովա, Ս. Գ. Տեր-Մինասովա, Ե. Մ. Վերեշչագին և Վ. Գ. Կոստոմարով), կոմպետենտային մոտեցման (Ի.Ա. Զիմնյայա, Ե. Ն. Սոլովովա) հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման (Մ. Ս. Կազան, Դ. Հայմզ, Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ (CEFR)), հոգելեզվաբանական (Ն. Վ. Բարիշնիկով, Ա. Ա. Լեոնտև, Լ. Ս. Վիգոտսկի), միջմշակութային հաղորդակցության զարգացման (Վ. Ս. Բիրլեր, Ն. Բրուկս, Ռ. Պ. Միլրոդ, Լ. Ա. Սամովար, Վ. Վ. Սաֆոնովա, Ռ. Ի. Փորթեր, Ե. Ի. Պասսով, Յու. Բ. Պիկովևա, Հ. Ֆիցջերալդ և այլք):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿԱՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:

Վերջին տասնամյակներում կոմպետենտ մոտեցման տարբեր կողմեր դիտարկվել են Ի.Ա. Զիմնյայայի, Ե.Յա. Կոզանի, Ա.Կ. Մարկովայի, Կ.Գ. Միտրոֆանովի, Ա.Վ. Խուտորսկոյի և այլոց աշխատություններում:

Կարևորվել են հատկապես լեզվի, մշակույթի և հաղորդակցման փոխկապակցվածությանը (Մ.Գ. Աստվածատրյան, Բ.Մ. Եսաջանյան, Վ.Վ. Սաֆոնովա, Պ.Վ. Սիսուև, Ս.Գ. Տեր-Մինասովա) նվիրված աշխատանքները:

Առանձնահատուկ նշանակություն ունեն այն հետազոտությունները, որոնք վերաբերում են միջմշակութային կոմպետենցիայի զարգացման հիմնախնդրին (Մ. Օ. Գյոդակյան, Բ. Մ. Եսաջանյան, Ի. Կ. Կարապետյան և այլոք):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

Առաջին փուլում (2006-2007թթ.) կատարվել է հետազոտության թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և քննության են առնվել միջմշակութային հաղորդակցությանը վերաբերող տարբեր մոտեցումները:

Երկրորդ փուլում (2007-2010թթ.) կատարվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ լեզվաբանական, հոգեբանամանկավարժական, լեզվական և մեթոդական վերլուծություն: Որոշարկվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածն ու պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները:

Երրորդ փուլում (2010-2013թթ.) հիմնավորվել են դասագրքերում դասանյութերի ընտրության սկզբունքները: Կատարվել է ձևավորող փորձարարական ստուգման նյութերի նախնական մշակում:

Չորրորդ փուլում (2013-2015թթ.) կատարվել է լեզվամշակութային հաղորդակցությունը զարգացնող դասանյութերի ընտրությունը և մշակումը, որն իրականացվել է՝ առաջին պլան մղելով հաղորդվող տեղեկատվության գործաբանական և հանրամշակութային բաղադրիչները. իրականացվել է փորձարկումը, ամփոփվել և վերլուծվել են ստացած արդյունքները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

- Մշակվել են միջմշակութային հաղորդակցության զարգացման հայեցակերպային դրույթներ և ստեղծվել է միջմշակութային կոմպետենցիան ձևավորող մեթոդական համակարգ:

- Համապատասխան վերլուծության արդյունքում բացահայտվել են անգլերենի՝ միջին դպրոցում գործող դասագրքերում առկա դրական կողմերն ու բացթողումները՝ միջմշակութային կոմպետենցիայի ձևավորման լույսի ներքո:
- Փորձարարական ուսուցմամբ հաստատվել է մեր կողմից մշակված միջմշակութային հաղորդակցության զարգացման հայեցակերպը և մեթոդական համակարգը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշակված միջմշակութային հաղորդակցության հայեցակերպը և մեթոդական համակարգը հիմք են հանդիսանում դասագրքերի ստեղծման գործընթացում հաղթահարելու առկա թերացումները լեզվական և մշակութային առումով՝ տեքստերի սկզբնաղբյուրների համամասնական ներմուծմամբ, թիրախային լեզվի և մշակույթի կապի, միջմշակութային երկխոսության ապահովմամբ:

Հետազոտության արդյունքները և եզրակացությունները կարող են հիմք հանդիսանալ դասագրքաստեղծման գործընթացում վերանայման և փոփոխություններ իրականացնելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի միջմշակութային հաղորդակցությանը վերաբերող տեղեկատվությունը, դասագրքերի ստեղծման գործընթացում մեր կողմից կատարված առաջարկները, տեքստերի, վարժությունների համակարգը կարող են օգտակար լինել նոր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման, նոր դասընթացների նախագծման, որոշակի ծրագրերի կազմման գործում, ինչպես նաև հանրակրթական դպրոցում դասավանդող ուսուցիչների համար:

ՊԱՀՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի որակական հատկանիշները կախված են հաղորդակցական-լեզվական կարողությունները զարգացնող համալիր և համակարգված դասանյութերի ընտրությունից, որտեղ առանձնապես կարևորվում են միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան զարգացնել ուսումնական նյութերը:

2. Աշակերտների միջմշակութային կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացմանը մեծապես կարող են նպաստել մեր կողմից մշակված միջմշակութային հաղորդակցության հայեցակերպը և մեթոդական համակարգը:

3. Ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, մշակույթի, ավանդույթների իմացությունը կարևոր պայման է միջմշակութային կոմպետենցիայի ձևավորման համար, եթե սովորողները զուգահեռաբար ուսումնասիրում են սեփական լեզվամշակութային իրողություններն անգլերենով:

4. Միջին դպրոցի աշակերտների միջմշակութային կոմպետենցիան ենթադրում է լեզվանյութի ընտրության հաղորդակցական սկզբունքների կիրառում և ուսումնախոսքային տարբեր իրադրություններում անկաշկանդ հաղորդակցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովվում են օտար լեզուների դասավանդման ոլորտում ձևավորված առաջավոր տեսությունների համապարփակ վերլուծությամբ, հիմնավորվում տեսական և գործնական մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական ու մեթոդական առանձնահատկություններին համապատասխան, հետազոտության արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն ընդգրկում է 5 գծապատկեր, 6 աղյուսակ, 3 տրամագիր, հարցաթերթիկներ և հավելվածներ: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 122 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 Հաղորդակցական-լեզվական կոմպերենցիան որպես լեզուների ուսուցման գլխավոր նպատակ

Օտար լեզուներ ուսուցանելիս հաղորդակցության զարգացումն ընդգրկում է մի շարք մտավոր գործընթացներ՝ նոր տեղեկատվության ընկալում, մտապահում, ճանաչում, ինչպես նաև մշակում ու փոխանցում: Դրանցից յուրաքանչյուրը ֆիզիկական և մտավոր ունակությունների և գործողությունների համադրություն է՝ պայմանավորված մի շարք գործոններով՝ սովորողի տարիքը, մտավոր ներուժը, աշխարհայացքը, ընդհանուր գիտելիքները, լեզվամտածողությունը, լեզվազգացողությունը և այլն:

Շատ հաճախ «**հաղորդակցություն**» եզրույթն ընդհանրացվում է «շփում» հասկացության հետ:

Այս կարծիքին են մի շարք հետազոտողներ (Օ. Լ. Գնատյուկ, Մ. Ս. Կազան, Վ. Պ. Կոնեցկայա), ովքեր դիտարկում են հաղորդակցությունը որպես նպատակաուղղված շփում, որն իրականանում է որոշակի իրավիճակներում՝ խոսքային գործունեության չափանիշներին համապատասխան [20], [28], [34]:

Մինչդեռ Ե. Պ. Իլյինի բնորոշմամբ «շփում» և «հաղորդակցություն» հասկացությունների փոխհարաբերությունները տարբեր են՝ ընդհանուր (հաղորդակցություն) և մասնակի (շփում): Ոչ բոլոր հաղորդակցություններն են շփում, բայց ցանկացած շփում հաղորդակցման մասնակի տեսակ է [37, 18]:

Այսպիսով՝ «հաղորդակցություն» և «շփում» հասկացություններն իմաստով և՛ ընդհանուր են, և՛ տարբեր: Նրանց միջև ընդհանրությունը տեղեկատվության փոխանակման և փոխանցման գործընթացն է և լեզվի հետ կապը, որը տեղեկատվության փոխանցման միջոց է, իսկ տարբերությունը պայմանավորված է այս հասկացությունների համար տրված բազմաթիվ սահմանումների հետ: Սա բացատրվում է նրանով, որ «հաղորդակցություն» և «շփում» հասկացությունները

կիրառվում են տարբեր գիտություններում, որտեղ առաջնահերթ են համարում այս հասկացությունների տարբեր կողմերը:

Ինչ վերաբերում է **կոմպետենցիային**, ապա ներկայում առանձնանում են «կոմպետենցիա» (компетенции) և «կոմպետենտություն» (компетентность) հասկացությունների ուսումնասիրման մի շարք դիտարկումներ:

Բառարանում նշված բառերն իմաստներով ընդհանրացված են, որոնց համար տրված է հետևյալ սահմանումը. բավարար կամ արդյունավետ կերպով ինչ-որ բան անելու ունակություն [118]:


Շատ հետազոտողներ Բ. Ա. Բոլոտովը, Վ. Վ. Սերիկովը, Բ. Ի. Հասանը, Ա. Ն, Հոմսկին, Ռ. Պ. Միլրուդը, այն կարծիքին են, որ կոմպետենցիան գիտելիք է, կարողություն, հմտություն և գործունեություն, մինչդեռ կոմպետենտությունը անձնային որակ է, որը բնորոշում է կոմպետենցիաների տիրապետման մակարդակը [13], [53], [60], [61], [112]:

Ժամանակակից մասնագիտական կրթության համակարգը հիմնվում է կոմպետենտային մոտեցման վրա: Կոմպետենտությունը գործունեության սուբյեկտի ձեռքբերումն է, որը ենթադրում է համապիտանի (ունիվերսալ) գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ընդունակությունների և անձնային որակների դրսևորում: Կոմպետենտությունը կոնկրետ անձի կողմից կոմպետենցիաների համակարգի յուրացումն է: Իսկ կոմպետենցիան սովորողի՝ գործունեության ընթացքում առարկայացված կոմպետենտությունն է, գիտելիքների, կարողությունների, անձնային որակների, գործնական փորձառության համակարգը, որն էլ որոշում է անձի՝ գործունեությանը պատրաստ լինելը [1, 20]:

Ի. Ա. Զիմնյայան նշում է, որ «կոմպետենցիա» և «կոմպետենտություն» եզրույթներն իմաստով մոտ, սակայն ոչ համընկնող հասկացություններ են [78]:

Վերջինիս կողմից պատկերված է գծապատկեր, որտեղ հստակ նշված է կոմպետենցիաների փոխակերպումը կոմպետենտության:

ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



[Зимняя, 2010]

Ըստ Ի. Ա. Զիմնյայայի հայեցակարգի կոմպետենցիան կրթական շարունակական գործընթացի արդյունք է, որի հիմնական սուբյեկտը սովորողն է: Կրթական շարունակական գործընթացն ընդգրկում է երեք ուղղություններ. առաջին և երկրորդ ուղղությունը, ինչպես պատկերված է գծապատկերում, համապատասխանում է կոմպետենցիա հասկացությանը, մինչդեռ երրորդ ուղղությունը ներկայացնում է կոմպետենտությունը, որը կյանքի ընթացքում ձևավորված էթնոհանրամշակութային, այլ անձանց հետ փոխկապակցված, գիտելիքների վրա հիմնված մարդու անձնային որակներն են, որոնք ձևավորվում են կրթական գործընթացում և համարվում են վերջինիս արդյունքը [78]:

Ասվածի լույսի ներքո կարելի է գալ այն համոզման, որ կոմպետենցիան սովորողի գիտելիքների, կարողությունների, անձնային որակների համակարգ է, որն էլ բնորոշում է անձի պատրաստվածության մակարդակը:

Իսկ կոմպետենտությունը համընդհանուր գիտելիքների, կարողությունների, հմտությունների և անձնային որակների դրսևորում է:

Այսինքն՝ կոմպետենտությունը վերաբերում է գործունեության սուբյեկտին, իսկ կոմպետենցիաները՝ գործունեության բնույթին:

Ինչ վերաբերում է **հաղորդակցական-լեզվական կոմպետենցիային (communicative language competence)**, ապա այս թեման ամբողջովին ընդգրկված է «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի» (CEFR) կողմից մշակված տեսություններում, որտեղ հստակ նշվում է. «Լեզվական-հաղորդակցական կոմպետենցիան կարող է դիտարկվել որպես մի շարք բաղադրիչների ամբողջություն. **Լեզվական (linguistic)**, **հանրալեզվաբանական (socio-linguistic)** և **գործաբանական (pragmatic)**, որոնցից յուրաքանչյունն իր հերթին ընդգրկում է գիտելիքներ, կարողություններ և հմտություններ» [4, 15-16] [65]:

Ըստ էության «**լեզվական կոմպետենցիա**» եզրույթն ինքնին հարաբերական է, քանի որ.

1. տարբեր մշակութակիրներ ունեն լեզվի ճիշտ կիրառման իրենց պատկերացումները,
2. յուրաքանչյուր էթնիկ խումբ մշակել է լեզվական կոմպետենցիան գնահատելու իր մեխանիզմը,
3. հաղորդակցման ընթացքում ցուցաբերած կոմպետենցիայի մակարդակը կարող է տարբերվել՝ կախված հաղորդակցության նպատակներից:
- Վ. Ի. Կարասիկի կողմից նույնպես դասակարգվել է լեզվական կոմպետենցիայի մի քանի դրսևորում.
 - լեզվի իրական իմացություն,
 - կրթված և ոչ կիրթ լեզվակիրների լեզվական կոմպետենցիա,
 - լեզվակիրների ու օտարալեզու խոսողների լեզվական կոմպետենցիա,

- Լեզուն կիրարկողների և փորձագետների լեզվական կոմպետենցիան [32, 63-64]:

Լեզվական կոմպետենցիան ներառում է բաղադրիչներ, որոնք շատ կարևոր են լեզվի դասավանդման մեթոդիկայում: Դրանք կապված են լեզվի և մտածողության, քերականության և բառապաշարի հետ:

Այս համատեքստում կարելի է հավելել, որ լեզվական կոմպետենցիա ասելով՝ հասկանում ենք քերականական ճիշտ ձևերի և շարահյուսական կառույցների կիրառման կարողություններ: Առանց բառերի և քերականական ձևերի իմացության, իմաստալից արտահայտությունների կազմման որևէ բանավոր հաղորդակցման մասին խոսք գնալ չի կարող [48]:

Ինչպես հայտնի է լեզվական կոմպետենցիան առնչվում է լեզվի համակարգի, այսինքն բառապաշարային, հնչյունաբանական, շարահյուսական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Տիրապետելով այս կոմպետենցիային հնարավոր է կազմել իմաստալից նախադասություններ:

Եվրախորհուրդը մեզ է ներկայացնում այս համակարգի հետևյալ տարբերակումները.

1. բառապաշարային կոմպետենցիա,
2. քերականական կոմպետենցիա,
3. իմաստային կոմպետենցիա,
4. հնչյունական կոմպետենցիա,
5. ուղղագրական կոմպետենցիա,
6. ուղղախոսական կոմպետենցիա [4, 126] [65] :

Նշվածի լույսի ներքո կարելի է հավելել, որ բառապաշարային կոմպետենցիայի ապահովման հիմնական պայմանը տարբերակված մոտեցումն է՝ կախված բառապաշարի ռեպրոդուկտիվ կամ ռեցեպտիվ յուրացումից: Պոտենցիալ բառապաշարի բառերի մի մասը կարելի է ինքնուրույն հասկանալ, սակայն հիմնական մասը վարժեցման հատուկ աշխատանք է պահանջում:

Քերականական կոմպետենցիան (Grammatical Competence) կարելի է սահմանել որպես լեզվի քերականական պաշարների գիտելիք և նրանց օգտագործման կարողություն [4, 130] [65]:

Հիրավի, քերականական կոմպետենցիան կապված է քերականական գիտելիքների ձեռք բերման և խոսքային գործունեության մեջ դրանց համապատասխանաբար կիրառման հետ: Այն ենթադրում է որոշակի միտք արտահայտելու կարողություն, քերականական կանոնների իմացություն, որոնք լեզվական միավորները փոխակերպում են իմաստալից արտահայտությունների, ինչպես նաև կարողություններ և հմտություններ՝ կիրառելու քերականական երևույթները շփման տարբեր իրավիճակներում:

Իմաստային կոմպետենցիան (Semantic competence) ուսումնասիրում է սովորողի իմաստական կազմակերպման իմացությունը և տիրապետումը [4, 133] [65]:

Այլ կերպ ասած՝ իմաստային կոմպետենցիան կարողություն է որոշելու որոշակի բառերի իմաստներն ընդհանուր համատեքստում, ինչպես նաև բացահայտելու միջբառային հարաբերությունները: Քանի որ բառերը կարող են համապատասխանել մեկից ավելի շարահյուսական կառուցվածքի, ուստի իմաստային կոմպետենցիան կնպաստի որոշելու տրված շարահյուսական կառուցվածքի իմաստը:

Ինչ վերաբերում է **հնչյունական կոմպետենցիային (Phonological competence)**, ապա խոսքի հնչյունական մասի յուրացումը ինքնանպատակ չէ, այն խոսքային գործունեության անհրաժեշտ բաղադրիչ է, որն անմիջական կապ ունի լսելու, խոսելու, ընթերցելու և գրելու հետ և միաժամանակ ձևավորում է բառական և քերականական հմտություններ:

Հետևաբար, հնչյունական կոմպետենցիան ոչ միայն ապահովում է արտահայտությունների ճիշտ արտասանությունը, ինտոնացիայի արտաբերումը, այլ նաև թույլ է տալիս ճիշտ ընկալել ասվածը, այսինքն հնչյունական կոմպետենցիան կարողություն է հստակ ըմբռնելու ուղերձը, արտահայտելու սեփական մտքերը, որոնք անմիջական կապ ունեն այն հանգամանքի հետ, թե ինչ մակարդակում են ձևավորվել հնչյունական հմտությունները:

Ուղղագրական կոմպետենցիան (Orthographic competence) ներառում է նիշերի կազմավորման մասին գիտելիքներ, դրանց արտաբերման ու ըմբռնման կարողություններ, որոնց օգնությամբ ստեղծվում են գրավոր տեքստերը [4, 135] [65]:

Ուղղագրական գրագիտությունը ընդհանուր լեզվական մշակույթի բաղադրիչ մասն է, մտքերի ճշգրիտ արտաբերման և փոխըմբռնման գրավականը: Խոսքի մշակույթը «մտքերի հագուստն» է, որով սովորաբար բնութագրվում է կրթված մարդու մակարդակը [9, 159]:

Ուղղախոսական կոմպետենցիան (Orthoepic competence) սերտորեն կապված է ուղղագրության և հնչյունաբանության հետ, այսինքն առանց հնչյունների ճիշտ արտաբերման և բառերի ուղղագրության իմացության հեշտ չէ տիրապետել ուղղախոսական հմտություններին և կարողություններին: Հետևաբար, ինչքան զարգացած է բանավոր խոսքի մշակույթը, այնքան բարձր հիմքերում է ուղղախոսությունը և գրագետ է գրավոր խոսքը:

Ինչ վերաբերում է **հանրալեզվաբանական կոմպետենցիային** (Sociolinguistic competences), ապա վերջինս ենթադրում է գիտելիքներ հանրամշակութային կանոնների վերաբերյալ, այն է իմանալ, թե ինչպես կիրառել լեզուն պատշաճ ձևով: Պատշաճությունը կախված է հաղորդակցման վայրից, թեմայից և հաղորդակցվողների միջև եղած հարաբերություններից: Ավելին, լինել պատշաճ նշանակում է իմանալ օտար մշակույթի խոհրդանիշները, որ պարագայում ինչ քաղաքավարության նորմեր կիրառել, ինչպես համապատասխան վերաբերմունք ցուցաբերել՝ օրինակ հարգանքի, հեգնանքի, ակնածանքի, երախտագիտության դեպքում:

Ա. Վ. Գլուխովան հանրալեզվաբանական կոմպետենցիան դիտարկում է որպես աշակերտների կողմից լեզվական միջոցների իրացման կարողություն որոշակի լեզվական իրադրությունում: Այստեղ նա կարևորում է բառի և բառակապակցության իմաստավորումները՝ կապված հաղորդակցման ձևից և ոճից, ինչպես նաև հաղորդակցման գործնական նպատակից [76, 206]:

Ըստ Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի (CEFR). *հանրալեզվաբանական կոմպետենցիան առնչվում է լեզվի օգտագործման սոցիալ-մշակութային պայմաններին* [4, 16] [65]:

Ա. Արշակյանն այն կարծիքին է որ հանրալեզվաբանական կոմպետենցիան վերաբերում է լեզվական ձևերի միջև եղած հարաբերությունների նշանակություններին, նրանց իմաստին, որը տարբերվում է լեզվական իրազեկության պարունակած իմաստից: Եթե վերջինս հենվում է լեզվական նշանների միջև եղած կապի և նրանց պայմանական /խոսքաշարից դուրս/ նշանակության վրա, ապա հանրալեզվաբանական կոմպետենցիան ճշգրտում է լեզվական նշանների և նրանց նշանակյալի միջև եղած կապը խոսքաշարում կամ տվյալ իրադրությունում: Այս իրազեկության բաղկացուցիչ մասերից է «կազմված» հաղորդակցական մտադրության համապատասխան խոսքաշարում կիրառումը [68, 83-84]:

Ինչպես հայտնի է, հանրալեզվաբանական կոմպետենցիան ուսումնասիրում է լեզվի օգտագործման ոլորտի հետ կապված գիտելիքները, *մասնավորապես հասարակական հարաբերությունների լեզվաբանական մարկերներ* (Linguistic markers of social relations), *քաղաքավարության նորմեր* (Politeness conventions), *ժողովրդական իմաստության արտահայտություններ* (Expressions of folk wisdom), *ռեգիստրի տարբերություններ* (Register differences), *բարբառ և արտասանություն* (Dialect and accent) [4, 136] [65]:

Ասվածի համատեքստում հարկ է տարբերակել «սոցիալական կարգավիճակ» և «սոցիալական դեր» հասկացությունները:

Վ. Ի. Կարասիկի բնորոշմամբ սոցիալական կարգավիճակն իր մեջ ներառում է իրավունքներ և պարտականություններ, մինչդեռ սոցիալական դերը կարգավիճակի դինամիկ ոլորտն է: Երբ անհատը օգտվում է իր իրավունքներից և պարտականություններից, այնուհետև նա դեր է ստանձնում: Կարգավիճակը պատասխանում է «Ո՞վ է նա» հարցին, իսկ դերը՝ «Ի՞նչ է նա անում» [33, 51]:

Քաղաքավարության նորմերը դասակարգվում են հետևյալ կերպ.

1. «դրական» քաղաքավարություն,
2. «բացասական» քաղաքավարություն,

3. «խնդրում եմ, շնորհակալություն» բառերի պատշաճ օգտագործում,

4. «անքաղաքավարություն» [4, 137]:

Դրական և բացասական քաղաքավարության նորմերը սոցիալական կարգավիճակի տեսանկյունից իրարամերժ են անձնային և սոցիալական հարթակում: Դրական քաղաքավարությունը շփումն է սեփական, մինչդեռ բացասական քաղաքավարությունը՝ օտար շրջապատի հետ [33, 80]:

Ինչ վերաբերում է **ժողովրդական իմաստության արտահայտություններին**, ապա վերջիններս միտված են հետաքրքություն առաջացնելու սեփական ազգի մշակույթի և լեզվի հանդեպ, կրթությունն իրականացնելու «մշակույթների երկխոսություն» համատեքստում, զարգացնելու ճանաչողական մոտիվացիան և կարողությունը շփվելու օտար լեզվով, նպաստելու անձի կայացմանը:

Հաղորդակցման ռեգիստրի տարբերություններին անդրադառնալիս, հատկանշական է Ա. Դ. Շվեյցերի և Լ. Բ. Նիկոլսկու այն դիտարկումները, ըստ որի հաղորդակցման ռեգիստրը լեզվական միջոցների ընտրության համակարգ է, որը կախված է սոցիալական իրավիճակից [63, 75]:

Գործաբանական կոմպետենցիան (*Pragmatic competences*) առնչվում է լեզվական պաշարների գործառնական կիրառման հետ (լեզվական գործառույթի իրագործում, խոսքային ակտ)՝ հաղորդակցական փոխներգործության մեխանիզմներին համապատասխան [4, 15-16] [65]:

Վերը նշվածի լույսի ներքո կարելի է ենթադրել, որ գործաբանական կոմպետենցիան հաղորդակցական վարքագծի համապարփակ տիրապետումն է, որն հանդիսանում է տվյալ լեզվակիր ժողովրդի հաղորդակցական նորմերի և ավանդույթների ընդհանրություն և ներկայացնում է այս կամ այն լեզվամշակութային հանրությունը:

Այլ կերպ ասած, գործաբանական կոմպետենցիան կարողություն է, որը թույլ է տալիս հաղորդակցվելիս ճիշտ կողմնորոշվել, հաշվի առնել զրուցակցի կարծիքը, կիրառել առավել պատշաճ արտահայտչամիջոցներ՝ ելնելով շփման պայմաններից և նպատակներից:

Խոսույթային կոմպետենցիան (Discourse competence), իրականացնելով տեղեկատվական, հաղորդակցական, ինչպես նաև ճանաչողական գործառույթներ, կրթական գործընթացի կարևորագույն բաղադրատարր է և խոսքային հաջող գործունեության գրավական:

Այս համատեքստում հատկանշական է, որ խոսույթային կոմպետենցիան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջություն է, որոնք թույլ են տալիս կիրառել և ընկալել խոսույթները որպես շփման գործընթացում իրական հաղորդակցման օբյեկտներ [23, 31]:

Խոսույթային կոմպետենցիան կիրառողի/սովորողի կարողությունն է դասակարգել նախադասություններն այն հաջորդականությամբ, որպեսզի արտահայտվեն իմաստային կապակցված մտքեր [4, 141] [65]:

Ըստ էության, խոսույթային կոմպետենցիայի բնույթն այն է, որ հաղորդակցումն իրականացնելիս հասնել նպատակին, տիրապետել բազմաթիվ մեթոդների տեղեկատվություն ստանալու ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր շփման ընթացքում:

Գործառական կոմպետենցիան (Functional competence) անհրաժեշտ պահանջմունք է պարտականությունների կատարման գործում, որի հիմքում ընկած է գործառույթների իրականացումը: Գիտելիքն ու փորձն այս կոմպետենցիայի կարևորագույն բաղադրատարրերից են, որոնք խթանում են որոշակի գործունեություն ծավալելուն:

Այս համատեքստում կարևորվում է Եվրախորհուրդի կողմից սահմանած *շեմային մակարդակ* որպես բազային համընդհանուր մակարդակ: Ըստ *շեմային մակարդակի*՝ օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումն է, որի բաղադրիչ մասերն են.


1. լեզվական կոմպետենցիա,
2. հանրալեզվաբանական կոմպետենցիա,
3. սոցիալ- մշակութային կոմպետենցիա,
4. ռազմավարական կոմպետենցիա,
5. սոցիալական կոմպետենցիա [54, 6]:

Հաղորդակցական կոմպետենցիային (Communicative competence)

անդրադարձել են նաև մի շատ հետազոտողներ՝ Ա. Ա. Լեոնտևը, Ի. Ա. Զիմնյայան, Մ. Ն. Վատյուտնևը, Բ. Մ. Պոլոնսկին, Օ. Մ. Կազարցևան, ովքեր այն կարծիքին են, որ վերջինս խոսքային գործունեություն իրականացնելու կարողություն է: Սա ենթադրում է կարողություն հարցեր առաջադրելու և հստակ ձևավորելու դրանց պատասխանները, ուշադիր լսելու և ակտիվ քննարկելու առկա խնդիրների շուրջ, մեկնաբանելու զրուցակցի արտահայտած մտքերը և տալու քննադատական գնահատական, ինչպես նաև կարողություն սեփական կարծիքը հիմնավորելու, արտահայտելու կարեկցանք, լսելու և ընկալելու շփման այլ մասնակիցների կարծիքները [38], [25], [75], [47], [29]:

Գծապատկեր 2

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՄՈՂԵԼ



[Hymes, 1972]

Ինչպես պատկերված է գծապատկերում Դ. Հայմսը դիտարկել է մի մոդել, որն առավել լայն շրջանակներ է ընդգրկել: Վերջինիս կարծիքով մտավոր գործունեության արդյունքը մի շարք կարողությունների և հմտությունների շնորհիվ արտացոլվում է սոցիալական իրականության մեջ [98, 269-293]:

Ամփոփելով՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ հաղորդակցական կոմպետենցիան ներառում է գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հաղորդակցվող կողմերին ստեղծելու խոսքային վարքագծի սեփական ծրագրեր և համապատասխան շփման իրավիճակներ:

Հաղորդակցական կոմպետենցիան խոսքային գործունեության բոլոր տեսակների տիրապետումն է, ինչպես նաև հաղորդակցման գործընթացում անձի պատշաճ դրսևորման կարողություն՝ կախված հաղորդակցման պայմաններից:

1.2 Միջմշակութային հաղորդակցության հիմնախնդիրները

Վերջին տասնամյակների ընթացքում առավել ընդլայնվել է տարբեր ազգերի և մշակույթների փոխադարձ շփման գործընթացը, որն ընդգրկում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներ: Միջմշակութային հարաբերություններն ակնհայտ են ոչ միայն կառավարական ինստիտուտների միջև իրականացվող փոխգործակցություններում, այլև տարբեր ազգերի և մշակույթների էթնիկ խմբերի, անհատների միջև:

Միջմշակութային հաղորդակցությունը՝ որպես գիտական ուղղվածություն, ի սկզբանե եղել է ամերիկացի քաղաքագետների և գործարարների հետաքրքրության կիզակետում: Նրանց կարծիքով, ակնհայտ էր այն հիմնախնդիրը, ըստ որի՝ օտար լեզուների իմացությունը չէր կարող այնպիսի գիտելիքներ ապահովել, որոնք թույլ կտային հաղորդակցվել տարբեր իրավիճակներում: Հետևաբար հանրակրթական ուսուցման համակարգում անհրաժեշտ է դասավանդել ոչ միայն այլ երկրների լեզուն, այլև մշակույթը: Անտարակույս, անհրաժեշտ է շեշտադրել միջմշակութային հաղորդակցության գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման առաջնահերթությունը:

Միջմշակութային հաղորդակցությունը՝ որպես ակադեմիական գիտատեսական ուղղվածություն, դիտարկվել է Հոլի և Թրագերի կողմից 1954թ. հրատարակած «Մշակույթը որպես հաղորդակցություն» (“Culture as Communication”) գրքում: Հեղինակները գրքում առաջադրում են «միջմշակութային հաղորդակցություն» եզրույթի լայն կիրառումը, որն իրենց կարծիքով, արտացոլում է մարդկային հարաբերությունների յուրահատուկ ոլորտը [101, 8]:

«Միջմշակութային հաղորդակցություն» եզրույթն առավել նեղ իմաստով հայտնվել է գրականության մեջ 1970-ական թվականներին Լ. Սամովարի և Ռ. Փորթերի հայտնի դասագրքում «Հաղորդակցությունը մշակույթների միջև» (Communication between Cultures), որն առաջին անգամ տպագրվել է 1972 թվականին [67]:

Այդ ժամանակից ի վեր ձևավորվել է գիտական ուղղվածություն, որի նպատակն է ուսումնասիրել հաղորդակցման հետ կապված խոչընդոտները և նրանց հետևանքները միջմշակութային հաղորդակցման իրավիճակներում: Այնուհետև «միջմշակութային հաղորդակցություն» հասկացությունը ավելի լայն իմաստ է ստանում այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են թարգմանության տեսություն, օտար լեզուների ուսուցում, մշակութաբանություն և այլն:


Միջմշակութային հաղորդակցությունը տարբեր մշակույթների պատկանող հաղորդակցման երկու կողմերի փոխըմբռնումն է [15, 26]:

Անշուշտ, միջմշակութային հաղորդակցությունը տարբեր մշակույթներ կրողների շփումն է, երբ յուրաքանչյուրն իրեն դրսևորում է իր մշակույթի կանոններին ու սկզբունքներին համապատասխան:

Միջմշակութային հաղորդակցությունն ուսումնասիրում է տարբեր ազգերի (մշակութային տարբեր ընկալումներ և խորհրդանիշների համակարգ ունեցող) հաղորդակցումը [100, 70]:

Միջմշակութային հաղորդակցությունն առավել հստակ պատկերված է Լ. Ա. Սամովարի և Ռ. Ի. Պորթերի կողմից առաջարկվող գծապատկերում, որը ներկայացնում ենք ստորև:

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ



[Samovar and Porter, 1997]

Գծապատկերում պատկերված են 3 տարբեր մշակույթներ: Մշակույթներ 1-ը և 2-ը ունեն նմանություններ, մինչդեռ 3-ը առանձնանում է: Մշակույթներին կապող սլաքները ներկայացնում են նրանց միջև իրականացվող հաղորդակցությունը: Օրինակ՝ եթե մշակույթ 1-ը փորձում է հաղորդակցման եզրեր ստեղծել մեկ այլ մշակույթի հետ, ապա այն իրականացնում է նախապես մշակված հաղորդակցություն, որը հետագայում կարող է փոխել իր բնույթը՝ կապված նոր մշակույթի ազդեցությունից: Ինչքան շատ են մշակույթների միջև եղած տարբերությունները, այնքան հաղորդակցման բնույթը կփոխվի: Այստեղից կարելի է ենթադրել, որ մշակույթներ 1-ի և 2-ի միջև տեղի ունեցող հաղորդակցությունը ենթակա չէ էական փոփոխությունների, նույնը չի կարելի ասել մշակույթ 3-ի մասին, որը տարբերվում է 1-ից և 2-ից [100, 70]:

Միջմշակութային հաղորդակցությունը կարող է իրականանալ կա՛մ խմբային, կա՛մ միջանձնային մակարդակում: Այլ կերպ ասած՝ հաղորդակցական գործընթաց կարող է տեղի ունենալ մշակութային տարբեր խմբերի (մեծ և փոքր) կամ անհատների միջև:

Ն. Բրուքսի կարծիքով, մարդիկ ֆիզիկապես և հոգեպես նույնն են, նրանց փոխհարաբերություններն են տարբեր՝ տեղայնքով պայմանավորված [95, 123]:

Մարդկանց սովորույթներում առանձնանում են հատկանիշներ, որոնք գովելի են, և այնպիսիները, որոնք խրախուսելի չեն: Ըստ բնակության վայրի՝ մարդկանց սովորույթները տարբերվում են, որն էլ տարբեր մշակույթների ձևավորման հիմքն է [95, 124]:

Այս տեսակետն էլ փաստում է այն, որ մարդու աշխարհընկալումը կախված է նրա մշակույթից, որն համապատասխան ազդեցություն է թողնում նրա վրա:

Վ .Ա. Մասլովյան մշակույթը բնորոշում է որպես մարդու կողմից իրականացվող տարբեր գործունեությունների ամբողջություն՝ հիմնված հաստատման և կանոնակարգման, արժեքների և ձևաչափերի համակարգի վրա: Այն մարդկության ժառանգական հիշողությունն է, որն ապրում է այլ մշակույթների երկխոսություններում, այն մարդկության գոյության խաղի կանոնների բանալին է [42, 17-18]:

Մշակույթը շատ բարդ և բազմաբնույթ երևույթ է, որն արտացոլում է մարդկային գոյության բոլոր կողմերը: Հետևաբար այն ուսումնասիրվում է մի շարք գիտությունների համատեքստում. սոցիոլոգիա, մարդաբանություն, պատմություն, լեզվաբանություն և այլն, և ունի ավելի քան 500 սահմանում: Սահմանումները հիմնականում դասակարգվում են 6 խմբի.

1. նկարագրական (մշակույթը մարդկային գործունեության բոլոր տեսակների, սովորույթների և հավատքի մի ամբողջություն է),
2. պատմական (համատեղվում են մշակույթը և ավանդույթներն ու հասարակության սոցիալական ժառանգությունը),
3. կանոնավորող (մշակույթը ձևաչափերի և կանոնների ամբողջություն է, որը նպաստում է մարդու վարքի ճիշտ դրսևորմանը),
4. հոգեբանական (մշակույթը մարդու վարքի դրսևորման ձևերի ամբողջություն է, որի ձևավորմանը նպաստել է մարդու մշակութային հարմարվողականությունը շրջապատող միջավայրի պայմաններին),
5. կառուցվածքային (մշակույթը փոխկապակցված երևույթների միասնական համակարգ է),

6. Ճագումնաբանական (մշակույթը մարդկային խմբերի հարմարվելն է բնակության նոր պայմաններին) [21, 19]:

Է. Սեպիրը տվել է «մշակույթ» եզրույթի 3 կարևոր բացատրություններ.

1. Մշակույթը սոցիալական արժեքների ժառանգություն է, որը կարող է լինել թե՛ նյութական, թե՛ հոգևոր:
2. «Մշակույթ» բառի տակ հասկացվում է այն, ինչ մարդը համարում է մշակութային արժեք՝ ավանդույթներ, հասարակություն, որին նա պատկանում է և այն, ինչ նա ժառանգել է անցյալից:
3. Մշակույթը քաղաքակրթության հատուկ դրսևորում է, որն արտացոլում է ազգային ոգին [52, 469]:

Միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից կարևորվում են Է. Սեպիրի կողմից դիտարկված սահմանումները, քանի որ մշակույթը, իրոք, բնորոշվում է «նյութական և հոգևոր արժեքների ժառանգություն», «ավանդույթներ», «ազգային ոգի» բնութագրերով:

Բ. Ս. Բիբլերի տեսակետը մշակույթի մասին այլ է: Նա մշակույթը սահմանում է որպես.

1. տարբեր մշակույթներ ներկայացնող մարդկանց հաղորդակցման և երկխոսության ձև,
2. անհատի ինքնահաստատման մեխանիզմ, անհատ, որ պատկանում է ինչ-որ պատմության և հասարակության,
3. առաջինն աշխարհն ընկալելու և բացահայտելու ձև [74, 31-42]:

Հատկանշական է նաև վերջինիս կողմից շատ հաճախ «մշակույթ» և «ստեղծագործություն» հասկացությունների նույնականացումը [12]:

Չուգահեռաբար Յու. Բ. Պիկույլան առաջարկում է մշակույթի համընդհանուր բնութագիրը, որը գործնականորեն արտացոլվում է բոլոր սահմանումներում.

- Մշակույթը հասարակական արժեքների, խորհրդանիշների և նշանների համակարգ է:
- Մշակույթը ծնվում է մարդու մեջ որպես կենսաբանական երևույթ:

- Մշակույթը ձևավորվում է մարդկանց համատեղ աշխատանքի արդյունքում:
- Մշակույթը չի ժառանգվում կենսաբանորեն, այլ փոխանցվում է հասարակությանը սերնդեսերունդ:
- Մշակութային առարկաները կրում են խորհրդանշական բնույթ (համարվում են նշաններ և ունեն իրենց նշանակությունը) [89, 268]:

Վերլուծելով Բ. Ս. Բիբլերի և Յու. Բ. Պիկուլայի կողմից առաջարկվող սահմանումները՝ ընդունելի չենք համարում այն մոտեցումները, որ մշակույթը դիտարկվում է սոսկ անձի հայեցակետից, ինչպես վկայաբերում են. «անհատի ինքնահաստատման մեխանիզմ», «այն ծնվում է մարդու մեջ որպես կենսաբանական երևույթ»: Այնինչ մշակույթն ինքնին ավելի ընդգրկուն է, հասարակական-պատմական երևույթ, որը ներկայացնում է այս կամ այն ազգին կամ ժողովրդին բնորոշ արժեքային համակարգը՝ ավանդույթներ, խորհրդանիշներ, կենսակերպ և այլն:

Ընդհանուր առմամբ խոսքը տվյալ ազգի ազգային արժեքների համակարգի մասին է, որի շնորհիվ այն տարբերվում է այլ ազգերից, և որը բացահայտում է իր ունեցած առավելությունները և որակում իրեն որպես ազգ:

Ակնհայտ է, որ նշված սահմանումների ծավալն այնքան մեծ է, որ հնարավոր չէ կողմնորոշվել այդ սահմանումների հեղեղի մեջ, ինչն էլ հաստատում է Հ. Վ. Հեսսի կարծիքը. «Յուրաքանչյուր ոք ստիպված կլինի բավարարվել մշակույթի մասին իր ունեցած պատկերացումներով» [66, 36]:

Այս համտեքստում կարելի է փաստել, որ միայն այլ աշխարհայացքի, աշխարհընկալման բախվելով, կարելի է հասկանալ սեփական հասարակական գիտակցության յուրահատկությունը, կարելի է տեսնել մշակույթների տարբերությունը և կոնֆլիկտը [14, 66]:

Այստեղից հարց է առաջանում, թե ինչ է **մշակութային կոնֆլիկտը**: «Կոնֆլիկտ» հասկացության բազմաթիվ սահմանումներ կան: Հիմնականում կոնֆլիկտն ամեն տեսակի հակամարտություն է կամ հետաքրքրությունների տարբերություն: Առավել ընդգրկուն և ճիշտ է կոնֆլիկտի հետևյալ սահմանումը. կոնֆլիկտը

փոխհարաբերությունների ընթացքում առաջացած որոշ հակասությունների պարզաբանման սուր միջոց է, որը վերածվում է կոնֆլիկտի մասնակիցների հակամարտության և որին հաջորդում են բացասական հույզերը [82, 87-93]:

Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ մարդկային վարքագծերի անհամապատասխանությունը, որի արդյունքում առաջանում են բացասական հույզեր: Այս կոնֆլիկտները սկիզբ են առնում այլ անձանց հետ մարդու շփման արդյունքում և ոչ միայն: Կոնֆլիկտներ կարող են լինել նաև այլ բնագավառներում (հասարակական տրանսպորտ, առևտուր և այլն) [43, 304]:

Մշակութային կոնֆլիկտ կարող է առաջանալ.

- տարբեր ազգերի և նրանց մշակույթների միջև (օրինակ՝ հայերի և ադրբեջանցիների),
- կրոնական խմբերի միջև (օրինակ՝ քրիստոնյաների և մահմեդականների),
- սերունդների և տարբեր մշակույթներ կրողների միջև (օրինակ՝ հոր և որդու, գյուղի և քաղաքի, և այլն),
- մշակույթի մեջ ավանդույթների և նորարարությունների ոլորտում,
- տարբեր լեզվամշակութային համայնքների և նրանց ներկայացուցիչների միջև [115]:

Միջմշակութային կոնֆլիկտների առաջացման պատճառները նույնքան լայնիմաստ են. կոնֆլիկտի հիմքում ընկած է ոչ միայն լեզվի անբավարար իմացությունը և հաղորդակցվելիս զուգընկերոջ խոսքը չընկալելը, այլև ավելի լուրջ պատճառ՝ մասնակիցների միջև խոսքի սխալ ընկալումը:

Այս կարծիքին է նաև Վ. Վ. Սաֆոնովան, ով նշում է, որ նույնիսկ լեզվաբանական իրազեկության բարձր մակարդակում հաղորդակցվող կողմերի շփումը կարող է չստացվել [51, 101]:

Թյուր կարծիք է այն, որ կոնֆլիկտային իրավիճակից խուսափելու միջոց է լեզվի բավարար իմացությունը: Մինչդեռ օտար լեզվի իմացությունը չի երաշխավորում միջմշակութային հաղորդակցության հաջողությունը, քանի որ կոնֆլիկտի պատճառ կարող է հանդիսանալ թյուրիմացությունը, ազգային կարծրատիպերը և

նախապաշարումները, մայրենի կամ օտար մշակույթի գերագնահատումը, միմյանց հակադրվելը [22, 45-46]:

Սա հանգեցնում է այն կարծիքին, որ միջմշակութային հաղորդակցությունը բարդ և հակասական գործընթաց է: Տարբեր ժամանակահատվածներում այն տարբեր բնույթ է կրել: Օրինակ, այն որ մշակույթների միջև եղած փոխհարաբերությունները ընթացել են խաղաղ, առանց արժեքների հանդեպ ունեցած նախապաշարումների: Բայց առավել հաճախ միջմշակութային հաղորդակցությունը նույնացվում է սուր հակադրությունների հետ՝ թույլի հանդեպ առավելություն ունենալու երևույթով:

Այս խնդրին լուծում կարող է տալ **միջմշակութային երկխոսությունը**, որին կհաջորդի միջմշակութային փոխըմբռնումը և փոխադարձ կապը:

Մշակույթում «երկխոսություն» հասկացությունը լայնիմաստ է: Այն իր մեջ կրում է հետևյալ իմաստները.

- երկխոսություն մշակութային արժեքներ ստեղծողի և սպառողի միջև,
- սերունդների երկխոսություն,
- երկխոսություն, որը կնպաստի ազգերի փոխգործակցությանն ու փոխհամաձայնեցմանը [62, 63]:

Միջմշակութային երկխոսության իմաստը և նպատակը հասկանալու համար նախ և առաջ հարկ է պարզաբանել, թե ինչ է երկխոսությունը: Գործնականում, ինչպես նաև քաղաքականության մեջ շատ է խոսվում երկխոսության մասին, նույնիսկ եթե այն չի իրականանում: Տեսական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից, ցանկացած երկխոսություն կիրականանա եթե.

1. ապահովված է երկու կամ ավելի կողմերի ներկայությունը,
2. տեղի է ունենում տեղեկատվության փոխադարձ փոխանակում, որը թույլ կտա երկու կողմերին հավասարաչափ արտահայտվել,
3. զրուցակիցները պատրաստակամ են ընդունելու միմյանց տեսակետներն ու հաղորդած տեղեկատվությունը,
4. մասնակիցները խոսում են մեկ ընդհանուր լեզվով, նույնիսկ եթե, այն այլ ազգի լեզու է,

5. յուրաքանչյուր մասնակից իրեն դիտարկում է մյուսի տեսանկյունից [93, 106]:

Հատկանշական է, որ երկխոսությունը մշակույթի ամենաիրական դրսևորումներից է և վերջինիս անբաժանելի բաղադրատարրը, որն իրականացնում է մշակույթի գործառույթները:


Այս համատեքստում խիստ կարևորվում է **միջմշակութային իրազեկության** դերը, առանց որի չի կարող իրականանալ մշակութային երկխոսություն: Միջմշակութային իրազեկություն ձևավորելու անհրաժեշտությունը պայմանավորված է ժամանակակից հասարակության զարգացման հետ, որը ներառում է սոցիալական և տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև մշակույթների միջև կապի ընդլայնումը:

Ն. Դ. Գալսկովայի և Ն. Ի. Հեգի կարծիքով միջմշակութային իրազեկությունը կարողություն է, որն անհատին թույլ է տալիս իրեն դրսևորել մշակութային երկխոսության մեջ (միջմշակութային հաղորդակցական պայմաններում): Միջմշակութային իրազեկությունն իր մեջ ներառում է օտարալեզու գաղտնիքների իմացությունն ու մշակութային փորձի զարգացումը [18, 276]:

Ա. Յու. Մուրատովը «միջմշակութային իրազեկություն» հասկացությանը այլ սահմանում է տվել: Նրա կարծիքով միջմշակութային իրազեկությունն անհատի կրթական բարդ գործընթաց է, որն իր մեջ ներառում է գիտելիքներ սեփական և մեկ այլ մշակույթի վերաբերյալ, այդ գիտելիքների գործնական կիրառման հմտություններ և կարողություններ, ինչպես նաև անհատի որակական հատկանիշներ և գործնական փորձ, որոնք թույլ կտան կիրառել այս գիտելիքները, կարողություններն ու հմտություններն այլ մշակույթ կրողների հետ փոխադարձ շփման գործընթացում [88]:

Ա. Յու. Մուրատովը վերոնշյալ սահմանումը դիտարկում է նաև գծագրի տեսքով:

ԱՆՀԱՏԻ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ



[Myратов, 2005]

Ա. Յու. Մուրատովի հետ համակարծիք է նաև Մ. Բ. Պլեխանովան, ով տալով միջմշակութային իրազեկության սահմանումը՝ նույնպես կիրառում է վերը նշված կարևոր բաղադրիչները (գիտելիք, կարողություն, անձի որակական հատկանիշներ) [46, 23]:

Անձի մոտ այս կարևոր բաղադրիչները զարգացնելու նպատակով առաջ է եկել **միջմշակութային կառավարման** անհրաժեշտությունը: Այն միտված է մշակութային և լեզվական բազմազանությունների և առանձնահատկությունների պայմաններում արդյունավետ որոշումների կայացմանը:

Միջմշակութային կառավարման առարկան տարբեր մշակույթների միջև առաջացած գործնական հարաբերությունների կառավարումն է: Վերջինս իր մեջ ներառում է.

1. արդյունավետ աշխատանքային պայմաններում հանդուրժողական փոխազդեցության և հաղորդակցման ստեղծում տարբեր մշակույթների խաչմերուկում,
2. գործարար միջավայրում միջմշակութային հակամարտությունների կարգավորում,
3. միջմշակութային իրազեկության զարգացում գործարար սեփականատերերի, կառավարողների և աշխատակիցների շրջանակներում [116]:

Միջմշակութային կառավարման զարգացումն ընթացել է երեք հիմնական փուլերով.

1. համընդհանուր (գլոբալ) մակարդակով հիմնախնդիրների հետազոտում՝ կապված այլ երկրների շուկայում ազգային խոշոր ընկերությունների ներթափանցման հետ: Առաջին փուլում հետազոտության հիմնական խնդիրն առանձին երկրների մշակութային ձևաչափերի ստեղծումն է, որոնք մշակվում են շատ սերունդների կողմից:
2. տեսությունների և տիպաբանության մշակում՝ կապված աշխատանքի ընդլայնման միջազգային գործընթացի հետ: Այս հետազոտությունների արդյունքում բացահայտվել է ազգային մշակույթի զգալի ազդեցությունը վարքագծի հղկման և կառավարման ձևերի վրա: Այստեղից ակնհայտ է դարձել, որ տնտեսական արդյունավետության բարձրացման նպատակով ընդհանուր մշակույթների փոփոխությունը կապված է միայն ազգային մտածելակերպի, լեզվի, մշակույթի, սովորույթների ուսումնասիրման հետ:
3. մշակույթների առանձնահատկությունների բազմազանությանը առնչվող հարցերի շուրջ հետազոտություններ: Հիմնախնդիրները նպատակաուղղված են ավանդական հայեցակարգերի վերափոխմանը, որի արդյունքում մարդկանց մոտ կձևավորվեն միջազգային

բազմազանությանը համապատասխան որակապես նոր իմացական մոտեցումներ [73, 48-50]:

Ինչ վերաբերում է միջմշակութային հաղորդակցության **սոցիալ-հոգեբանական** հիմքերին, ապա վերջին ժամանակներում առավել ընդգրկուն հետազոտություններ են իրականանում միջմշակութային հոգեբանության ոլորտում, հատկապես, երբ այն վերաբերում է հասարակական վարքագծին: Այս համատեքստում հարկ է նշել, որ ի սկզբանե միջմշակութային հաղորդակցության ուսումնասիրությունները հասարակության ընկալումների և ճանաչումների շրջանակներում էին: Հետո միայն ուշադրության տակ առնվեց սոցիալական վարքագիծը, քանի որ այս ոլորտում կատարվող ուսումնասիրությունները լիովին բացահայտում են միջմշակութային տարբերությունները [64, 84-86]:

Սոցիալ-հոգեբանությունը, որ հիմնականում ուսումնասիրություն է իրականացնում մարդկային խմբերի շրջանակներում, որպես վերլուծության միավոր ընտրում է անհատին, այնուհետև բացահայտում է այլ մարդկանց կամ լայն սոցիալական խմբերի ազդեցությունն անհատի վրա:

Այս համատեքստում խիստ կարևորվում են սոցիալ-հոգեբանական հիմնախնդրին առնչվող մի շարք գործոններ.

1. Անհատը պետք է ունենա նոր մշակույթի հեռանկարները գիտակցելու կարողություն:
2. Անհատը պետք է ձգտի նոր մշակույթի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերել:
3. Անհատը պետք է գիտակցի նոր մշակույթի հետ ծուլվելու անհրաժեշտությունը: Այստեղ արժևորվում է անհատի այն կարողությունը, որ, պահպանելով իր սեփական մշակութային արժեքները, պետք է իրազեկվի նոր մշակույթի արժեքներին, ձևաչափերին և վարքագծին:
4. Անհատը պետք է վստահ լինի, որ համապատասխան հաղորդակցական հմտություններն ու գիտելիքները կհանգեցնեն առավել արդյունավետ հաղորդակցության իրականացմանը [99, 62]:

Անհերքելի է, որ մարդիկ անհանդուրժող և մտահոգ են այլ մշակութակիրների հետ շփվելիս: Միջմշակութային շփումների ընթացքում նրանց մոտ կարող են առաջանալ մշակութային ցնցումներ և մի շարք հակասություններ: Այս իսկ պատճառով նրանց անհրաժեշտ է հոգեբանական պատրաստվածություն, որը կնպաստի առավել արդյունավետ հաղորդակցման [94, 82]:

Այս համատեքստում հատկանշական է Հ. Ֆիցջերալդի դիտարկումները: Ըստ նրա միջմշակութային պատրաստվածության նպատակը սեփական և օտար ազգերի կողմից ընդունվելն է: Ակնհայտ է, որ բազմամշակութային խմբերում հարաբերություններն ավելի արդյունավետ են, քանի որ նրանք խուսափում են «խմբային մտածելակերպի» սահմանափակումներից: Մինչդեռ միևնույն մշակույթի պատկանող հասարակության մտորումները բավականին սահմանափակ են և նմանատիպ: Այս իսկ պատճառով, հնարավոր դժվարություններից խուսափելու համար, մարդկային շատ խմբեր պետք է ձեռք բերեն մշակութային պատրաստվածություն: Հակառակ դեպքում բազմազանությունն ընթացիկ խնդիրներ կառաջացնի (լարվածություն, անվստահություն, թյուրիմացություն և այլն), որոնք էլ կհանգեցնեն անարդյունավետ շփման [97, 4]:

Շարադրանքից ելնելով՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ միջմշակութային հաղորդակցության առարկան մշակույթն է՝ տարբեր տեսակի և մակարդակի:

Միջմշակութային հաղորդակցման առարկա են նաև այն բոլոր մարդիկ, ովքեր այս կամ այն առումով մասնակցում են միջմշակութային հաղորդակցմանը:

Միջին դարոցում օտար լեզուների ուսուցման տեսանկյունից միջմշակութային հաղորդակցության անմիջական կրողներն աշակերտներն են, ովքեր հասնելով իրազեկության բարձր մակարդակի՝ պետք է դրսևորեն հանդուրժողականություն այլազանության և բազմազանության նկատմամբ՝ անկախ հաղորդակցվող կողմի ազգային-մշակութային պատկանելությունից:

ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մի շարք վերլուծությունների արդյունքում պարզ դարձավ, որ հաղորդակցական կոմպետենցիան զարգացնելիս բավարար չեն հոգեբանական գիտելիքները, այսինքն մարդու անձնային առանձնահատկությունները: Քանի որ հաղորդակցական գործընթացն անմիջական կապ ունի խոսքային գործունեության հետ, իսկ խոսքը՝ լեզվի, ապա հաղորդակցական կոմպետենցիայի հիմքում լեզվական և խոսքային կոմպետենցիաներն են: Լեզվական կոմպետենցիան ենթադրում է գիտելիք լեզվի մասին և կարողություն՝ կիրառելու լեզվական բոլոր միջոցները, մինչդեռ խոսքային կոմպետենցիան գիտելիք է մեթոդներ ստեղծելու և մտքեր ձևակերպելու, ինչպես նաև կիրառելու մեթոդները խոսքի փոխանցման և ընկալման գործընթացում:

Հաղորդակցական կոմպետենցիան արտացոլում է լեզվական միավորների իմաստաբանական գիտելիքները, խոսքի ստեղծման և փոխանցման մեխանիզմների տիրապետումը, ցանկացած տեսակի խոսույթի արտաբերման կարողությունը՝ կապված տվյալ խոսքամշակութային իրավիճակից՝ ներառելով նաև հաղորդակցվող կողմի, վայրի, ժամանակի և շփման պայմանների պարամետրերը:

Սույն գլխում քննվել է նաև միջմշակութային հաղորդակցության զարգացման անհրաժեշտությունն ուսուցման գործընթացում: Բացահայտվել է այն, որ միջմշակութային հաղորդակցության հիմքում ակնհայտ են մշակույթների միջև տարբերությունները, որոնք ի հայտ են գալիս ազգային տարբեր մշակույթների ձևավորման գործընթացում: Վերջիններս հանգեցնում են հաղորդակցման գործընթացում միջմշակութային կոնֆլիկտի առաջացմանը, որն ամեն տեսակի հակամարտություն է կամ հետաքրքրությունների տարբերություն: Այն փոխհարաբերությունների ընթացքում առաջացած լարվածության սրացում է, որի արդյունքում հակամարտող մասնակիցների մոտ առաջանում են բացասական հույզեր: Միջմշակութային կոնֆլիկտի հիմք կարող է հանդիսանալ թե՛ հաղորդակցվող կողմի խոսքը չընկալելը կամ լեզվին բավարար չափով չտիրապետելը, և թե՛ մասնակցի խոսքի սխալ ընկալումը:

Ուստի, այս խնդրին լուծում կարող է տալ միջմշակութային երկխոսությունը: Այն՝ լինելով մշակույթի ամենաիրական դրսևորումներից, իրականացնում է վերջինիս գործառույթները:

Սոցիալ-հոգեբանության տեսանկյունից դիտարկվել է միջմշակութային շփումների ընթացքում հաղորդակցվողների մոտ առաջացող մշակութային մի շարք հակասությունները: Այս իսկ պատճառով նրանց անհրաժեշտ է հոգեբանական պատրաստվածություն, որը կնպաստի առավել արդյունավետ հաղորդակցման:

Ի վերջո կարելի է գալ այն համոզման, որ միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան սկիզբ է դնում այնպիսի գաղափարների, որոնք կօգնեն սովորողներին վերագնահատել իրենց տեղն ու դերը ժամանակակից կյանքում:

ԳԼՈՒԽ 2

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2.1. Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի ստեղծման միջմշակությամբ հաղորդակցության սկզբունքը

Արդի հանրակրթության հիմնախնդիրներից առավել ուշագրավ է դպրոցական դասագրքի հիմնախնդիրը, որը որպես մշակույթի կրող կրթական գործընթացի կարևորագույն բաղադրատարրերից մեկն է: Բավական է քննարկենք դպրոցական դասագրքի մի քանի սահմանում՝ դիտարկված տարբեր հետազոտողների կողմից, որպեսզի համոզվենք, որ տվյալ հարցի շուրջ չկա հստակ և միանշանակ կարծիք:

Դասագիրքն իր մեջ պարունակում է տվյալ ուսումնական առարկային բնորոշ գիտական, կայուն, սովորողների համար հասանելի տեղեկատվություն, որը համապատասխանում է ծրագրին և պահանջվող չափանիշներին [30, 226]:

Վ. Վ. Կրասկու տեսակետն այլ է, ըստ նրա դասագիրքը բովանդակության ամրագրման միջոց է՝ ուղղված ուսումնական գործընթացի ամբողջականացմանը, որտեղ ծրագրված է ուսուցչի և սովորողների գործունեությունը [35, 125]:

Դասագրքի ավանդական երկու հիմնական գործառույթներն են.

1. Դասագիրքը կրթական տեղեկատվական աղբյուր է, որն հիմնվում է կրթության բովանդակության չափանիշների վրա:

2. Դասագիրքն ուսուցման միջոց է, որի շնորհիվ կազմակերպվում է ուսումնական, ինչպես նաև սովորողների ինքնակրթման գործընթացը [92]:

Առանցքային է Դ. Դ. Ջուկի այն բնորոշումը, ըստ որի դասագիրքը զանգվածային կրթական գիրք է, որը ներկայացնում է կրթության առարկայական բովանդակությունը և սահմանում է գործունեության տեսակները: Այն նախատեսված է դպրոցական ծրագրով պարտադիր կրթություն ստացող աշակերտների համար,

որտեղ հաշվի է առնվում նրանց տարիքային և այլ առանձնահատկություններ [26, 96]:

Մինչդեռ դասագիրքը կրթության բովանդակության յուրացման միջոց է [84, 8]:

Դասագրքի վերաբերյալ դիտարկումներ են կատարվել նաև օտար լեզուների ուսուցման տեսության և պրակտիկայի մեջ մասնավորապես Ի. Պ. Տովպինեցի, Ն. Յա. Դմիտրենայի աշխատություններում [59]:

Վերը նշված սահմանումների վերլուծությունները վկայում են այն մասին, որ նախ և առաջ բացակայում է «դպրոցական գասագիրք» հասկացության բուն իմաստը և երկրորդ, դասագրքի տարբեր սահմանումներ բնորոշում են նրա տարբեր գործառույթները և ուրույն տեսակետներով են բացահայտում նրա դերն ուսումնական գործընթացում:

Սա է վկայությունն այն բանի, որ հաշվի առնելով գիտամեթոդական տեսանկյունից մշակված որոշ հիմնավորումներ՝ դպրոցական դասագրքի նշանակության, բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ տեսակետները դեռևս մնում են կրթության տեսության և պրակտիկայի հրատապ խնդիրներից մեկը:

Այնուամենայնիվ, մշակելով ժամանակակից դասագրքի չափանիշները՝ հետազոտողներին հաջողվել է ձևավորել դպրոցական դասագրքի ձևի, կառուցվածքի և բովանդակության հետ կապված որոշակի սկզբունքներ:

Անգլերենի դասագրքերի ստեղծման տեսանկյունից դիտարկվում են բովանդակային և կառուցվածքային սկզբունքները:

Ըստ **բովանդակային սկզբունքի** անգլերենի դասագրքի ստեղծման գործընթացն առնչվում է տեքստերի ընտրության հետ: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է պահպանել մի շարք բովանդակային սկզբունքներ.

- ամբողջականության,
- խնդիրների համապատասխանության,
- կառուցվածքային ուղղվածության:

Ըստ ամբողջականության սկզբունքի դասագիրքը համապատասխանելու է հետազոտական պահանջմունքներին: Սա տարբեր տարիքային խմբերի համար

համապատասխան մոտեցումների կիրառումն է, այսինքն ուսուցման յուրաքանչյուր մակարդակում պետք է ընդլայնել այս կամ այն թեմայի բառապաշարը [96, 265]:

Խնդիրների համապատասխանության սկզբունքը սահմանում է ընտրված լեզվական նյութերի տվյալները, որոնք ընդգրկվելու են դասագրքում: Ըստ դասագրքի ընդհանուր համակարգի ստեղծման նպատակների և խնդիրների կարելի է ընդգրկել բառարանային հղումներ, քերականական սահմանումներ և այլն:

Ըստ կառուցվածքային ուղղվածության սկզբունքի ստեղծվում է դասագրքի լեզվական համակարգը՝ հիմնված գրքի բովանդակային բաղադրիչների վրա:

Այս սկզբունքի համաձայն Ա. Ս. Կարամնովը դասակարգել է.

- անգլերեն դասագրքի հիմնական տեքստերի համակարգ, որն իր մեջ ներառում է հիմնական ուսումնական տեղեկատվական նյութերը,
- լրացուցիչ տեքստերի համակարգ, որն իր մեջ ընդգրկում է լեզվանյութեր գիտելիքների ամրապնդման և խորացման համար (օրինակ՝ տեքստեր տնային ընթերցանության համար),
- բացատրական տեքստերի համակարգ, որոնց հետևում են բառարանային նշումները, հավելվածները և այլ ուսումնական նյութեր տեղեկատվության ընկալման և յուրացման համար [79, 63]:

Այստեղ կարևորվում է նաև ուսումնական առաջադրանքների ստեղծման (առաջադրանքներ և վարժություններ), յուրացման կազմակերպման (նշումներ, հուշաթերթիկներ, գծապատկերներ և նկարներ և այլն), ինչպես նաև կողմնորոշման (նախաբան, լրացումներ և այլն) համակարգերը:

Այսպիսով, ըստ անգլերենի դասագրքի ստեղծման բովանդակային սկզբունքների իրականանում է դասագրքի լեզվական համակարգի ստեղծման նախագծային գործունեությունը:

Անգլերենի դասագրքերի ստեղծման գործընթացն հիմնվում է **կառուցվածքային սկզբունքի** վրա: Ըստ այս սկզբունքի Ա. Ս. Կարամնովը կարևորել է դասագրքի այն հիմնական բաղադրիչները, որոնք պայմանավորված են.

- ✓ ժանրային պայմանականությամբ, երբ դասագրքի բովանդակությունը ընտրված չէ պատահական և համապատասխանում է որոշակի չափանիշների,
- ✓ ընտրված տեքստերով,
- ✓ դասանյութերի վավերականությամբ, երբ ընտրված տեքստերը վավերական են անկախ այն փաստից հեղինակը լեզուն կրողն է, թե ոչ,
- ✓ դասագրքի տվյալների վերլուծությամբ, երբ դասագիրքը պահպանվում է որևէ էլեկտրոնային ֆորմատով և համակարգչային համապատասխան ծրագրի միջոցով ենթարկվում է մշակման,
- ✓ հեղինակային իրավունքի համապատասխանությամբ, երբ դասագրքի հեղինակները պետք է պահպանեն մի շարք կանոններ.
 - նյութեր ձեռք բերելու համար թույլտվություն ունենան ինտերնետային կայքերից և հրատարակչություններից,
 - գրավոր թույլտվություն ունենան ուսումնական գործընթացի մասնակիցներից, ինչպես նաև այն անհատներից, որոնց պատկանող նյութերը կիրառվելու են լեզվական համակարգի ստեղծման գործընթացում [79, 64-67]:

Այսպիսով, դասագրքի ստեղծման գործում կարևորվում է խնդիրների ամբողջականացման գործընթացը, այսինքն տեքստային տվյալների դասավորությունը, նրանց պահպանման ձևաչափերը և առկա ծրագրային նյութերի վերամշակումը: Հավասարաչափ կարևորվում են նաև ժանրային պայմանականության, գիտականության (գիտական տեղեկատվության ապահովումը դասագրքերում) սկզբունքները և հեղինակային իրավունքի համապատասխանությունը:

Ուշադրության է արժանի նաև **մափչելիության սկզբունքը**, այն է դասագրքերի բովանդակության համապատասխանումը սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացվածության մակարդակին: Սակայն մատչելիությունը ոչ մի կերպ չի առնչվում նյութերի հեշտության հետ, քանի որ սովորողները գիտելիքներ են ձեռք բերում՝ լարելով իրենց մտավոր

կարողությունները: Այս իսկ պատճառով դասագրքերում ընտրված նյութերը պետք է լինեն բարդ, սակայն սովորողների համար ընկալելի և հետաքրքիր, որոնք վստահություն ներշնչելով՝ կմղեն վերջիններիս ստեղծագործական ակտիվության [114]:

Ինչ վերաբերում է անգլերենի դասագրքի ստեղծման **հաղորդակցական** սկզբունքին, ապա օտար լեզու (անգլերեն) դասավանդելիս ուսուցման ողջ գործընթացն ուղղված է լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելուն, այսինքն՝ գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը: Ի տարբերություն այլ առարկաների՝ օտար լեզվի օբյեկտը ոչ թե լեզվի մասին գիտությունն է, այլ լեզվի միջոցով ծավալվող խոսքային գործունեությունը:

Հաղորդակցական ունակությունների առավելագույն զարգացումն այն հիմնական, հեռանկարային, բայց և ոչ դյուրին խնդիրն է, որ ծառանում է օտար լեզուների ուսուցիչների առջև: Այստեղ իրենց կարևոր դերն ու նշանակությունն ունեն դպրոցական դասագրքերում ընդգրկված նյութերը և այն, թե ինչ սկզբունքներով են դրանք ընտրված: Իրազեկային մոտեցման տեսանկյունից անգլերենի դասագրքերին ներկայացվում են հետևյալ պահանջները.

1. զարգացնել աշակերտների լեզվական կոմպետենցիան, հիմնականում ուսուցման բոլոր փուլերում,
2. զարգացնել աշակերտների սոցիալ-մշակութային, գործաբանական կոմպետենցիան ուսուցման նախնական և միջին փուլերում,
3. հասնել հաղորդակցական կոմպետենցիայի ուսուցման ավարտական փուլում:

Այժմ օտար լեզուների ուսուցումը, ինչպես նաև սոցիալական կյանքի մնացած բոլոր ոլորտները վերապրում են բարդ և դժվարին ժամանակահատված՝ կապված արմատական վերափոխումների, արժեքների վերագնահատման, նպատակների վերանայման հետ: Նոր ժամանակները, նոր պայմանները պահանջում են ինչպես դասագրքերի, ընդհանուր մեթոդաբանության, այնպես էլ օտար լեզվի ուսուցման որոշակի եղանակների և մեթոդների արագ և հիմնովին վերանայում:

Դասագրքաստեղծման գործում հայ մեթոդիստները համարվում են խորհրդային մեթոդիստների իրավահաջորդները: Այստեղ հարկ է հիշատակել ոչ միայն անգլերենի մեթոդիստներին (Մ. Աստվածատրյան, Ի. Կարապետյան), այլև ռուսերեն լեզվի դասավանդման մեթոդիստներին (Բ. Եսաջանյան) և այլոց:

Այսօր օտար լեզուն և նրա ուսուցումն այնքան պահանջված են, որ առաջ է գալիս կենսական անհրաժեշտություն՝ օգտագործելու գիտելիքներն առօրյա կյանքում: Սա, անկասկած, իր ազդեցությունն է թողնում ուսուցման մեթոդների վրա: Անցյալում օգտագործված մեթոդները հիմա կորցրել են իրենց գործնական նշանակությունը և պահանջում են արմատական բարեփոխումներ և արդիականացում: Օտար լեզու ուսուցանելու ավելացող պահանջն իր հերթին թելադրում է իր պայմանները: Օտար լեզու սովորելիս կյանքի ժամանակակից պայմանները նախ և առաջ պահանջում են նրա գործնական կիրառումը: Հիմա լեզուն ոչ թե ուզում են իմանալ, այլ այն օգտագործել որպես հաղորդակցման միջոց այլ մշակույթներ կրողների հետ:

Ասվածի համատեքստում պահանջվում է ուշադրություն դարձնել լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության վրա: Օտար լեզու ուսուցանելու խնդիրը լեզվի գործառական կողմի ուսուցման և ավելի գործնական կիրառման մեջ է: Այս գործաբանական խնդիրների լուծումն հնարավոր է միայն մեկ պայմանում. պետք է ստեղծվի բավականին հաստատուն, հիմնավոր տեսական հենակետ (բազա): Այն ստեղծելու համար հարկավոր է նախ և առաջ.

- 1) կիրառել բանասիրության տեսական աշխատությունների արդյունքներն օտար լեզվի ուսուցման պրակտիկայում,
- 2) տեսականորեն իմաստավորել և ընդհանրացնել օտար լեզվի դասավանդման գործնական փորձը:

Ըստ օտար լեզուների ուսուցման ավանդական մոտեցման՝ դասավանդման հիմնական մեթոդիկական ամփոփվում է դասագրքերում տեղ գտած օտար լեզվով տեքստերի ընթերցանությամբ: Եվ սա երևում էր ոչ միայն դպրոցական, այլև բուհական մակարդակի կրթության մեջ: Կենցաղային ոլորտի հետ կապված՝ անգլերենի դասագրքերն ընդգրկում են այնպիսի թեմաներ, որտեղ տեքստերը ներկայացնում են առօրյա կյանքը, սակայն քիչ են այնպիսի մասնագետները, ովքեր

կարդալով տվյալ տեքստերը, իրենց համապատասխան ձևով դրսևորեն տվյալ իրավիճակում, որտեղ պահանջվում է օտար լեզվի գիտելիքների գործնական կիրառում: Այս դեպքում լեզվի տիրապետման չորս հմտություններից, որոնց մեջ տարբերակում ենք ընթերցանությունը, խոսելը, գրելը և ունկնդրելը, գործնական ծրագրում ամենապասսիվ ձևը համարվել է ընթերցանությունը: Օտար լեզվի դասավանդման նման հայեցողական, ոչ ակտիվ ձևը, որի հիմքում գրավոր տեքստերն են, հանգեցնում են այն բանին, որ սովորողները հասկանան, այլ ոչ թե ձեռք բերեն լեզվաբանական փորձ:

Ժամանակակից միջմշակութային սերտ հաղորդակցության պայմաններում ուսուցիչները ձգտում են սովորեցնել, թե ինչպես գործնականորեն կիրառել նախօրոք ունեցած լեզվական գիտելիքները:

Այս համատեքստում կարևորվում է դասագիրք ստեղծողների դերը, ովքեր ոչ միայն պիտի տիրապետեն անգլերեն լեզվին բավականին բարձր հաղորդակցական մակարդակում, այլև պիտի հաշվի առնեն բազմամշակութային և բազմալեզվյան տեսությունների շրջանակներում ձևավորված հայեցակարգերը, որոնց հիմքում միջմշակութային հաղորդակցության ուսուցման հիմնախնդիրն է: Դա չի նշանակում, թե հետին պլան է մղվում լեզվական կոմպետենցիայի զարգացման հիմնահարցը:

Ինչպես նշում է Մ. Ն. Վյատյուտնևը. «Լեզվական կոմպետենցիան ոչ մեծ քանակությամբ կանոնների մասին ներըմբռնողաբար ձեռք բերած գիտելիքն է, որն ընկած է լեզվի խոսքային այն կառույցների հիմքում, որոնք հաղորդակցման ժամանակ կարող են դառնալ արտահայտություններ, այսինքն՝ մակերեսային կառույցներ» [75, 58]:

Սակայն հաղորդակցական կոմպետենցիան մնում է առանցքային հասկացություն համարյա բոլոր մեթոդական համակարգերում:


Սա փաստում է Բ. Ա. Գլուխովի ու Ա. Ն. Շչուկինի այն տեսակետը, ըստ որի հաղորդակցման ուսուցումը օտար լեզվի ուսուցման գործնական ուղղվածության գործընթաց է, որի ընթացքում ուսուցման նպատակը (լեզվի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց) և նպատակին հասնելու միջոցը (խոսքային գործունեությունը) գործում են համատեղ [19, 210]:

Այստեղից հետևում է, որ դասագրքաստեղծման ցանկացած սկզբունքի գնահատման միջոց և չափանիշ կարող է հանդիսանալ հաղորդակցական կոմպետենցիայի բովանդակային բնութագիրը: Հատկապես կարևոր է այն, որ հաղորդակցական կոմպետենցիան խոսքային վարքագծի ընտրության և իրացման ծրագիրն է՝ կախված հաղորդակցման ընթացքում անձի կողմնորոշվելու կարողությունից [7, 56]:

Մ. Բիրամը ներկայացրել է այս իրազեկության ուսուցման և գնահատման տեսական կաղապարը, որն իր ներդրումն է ունեցել օտար լեզվի ուսուցման գործընթացում: Նրա կողմից առաջարկվող տեսությունը կարելի է պատկերել հետևյալ կերպ.

Գծապատկեր 5

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԸ



[Byram, 1997]

X –ը դիտարկվում է որպես միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիա:

1. Հաղորդակցական կոմպետենցիան ապահովում է աշակերտների գրելու, ընթերցելու, ունկնդրելու և խոսելու կարողությունները:
2. Մշակութային կոմպետենցիան ներառում է պատմություն, աշխարհագրություն, գրականություն, արվեստ, հավատալիքներ, տարիք, սեռ, դասակարգ և այլ ոլորտներ:
3. «Միջմշակութային կոմպետենցիա» հասկացությունը ապահովում է միջառարկայական գիտելիքների իմացություն, որը զարգացնում է աշակերտների հարմարվողականությունը, հանդուրժողականությունը և այլ հատկանիշներ, ինչպես նաև մշակութային բովանդակության գիտելիքները [117]:

Միջմշակութային կոմպետենցիայի ուսուցման տեսանկյունից սկզբունքային նշանակություն է ստանում գործաբանական կոմպետենցիայի զարգացման հիմնախնդրի արժարժումը դասագրքերի ստեղծման գործընթացում: Այն, ըստ Ե.Մ. Միլոսերդովայի, ենթադրում է հաղորդակցական վարքագծի համալիր տիրապետում՝ որպես ժողովրդի հաղորդակցական նորմերի և ավանդույթների ամբողջություն այս կամ այն լեզվամշակութային հանրության մեջ [86, 121-125]:

Այս համատեքստում ակնհայտ է այն, որ լեզվամշակութային հանրության հաղորդակցման հիմնական պայմաններից մեկը գործաբանական կոմպետենցիայի զարգացումն է: Նույնը կարելի է ասել հանրալեզվաբանական կոմպետենցիայի մասին, քանի որ ամեն լեզվական իրողություն տեղի է ունենում սոցիալ-մշակութային որոշակի համատեքստում, և նրա իրականացումը պայմանավորված է մայրենի և օտար լեզուների տիպաբանությունից: Այսինքն՝ տվյալ լեզվի օգտագործումը ենթադրում է որոշակի հարաբերությունների շրջանակ, որն առնվազն կիսով չափ պայմանավորված է սոցիալ-մշակութային համատեքստով, որտեղ այդ լեզուն օգտագործվում է լեզվակիրների կողմից: Փաստորեն, լեզվաարտահայտչաձևերը պայմանավորված են շրջապատով, հաղորդակցվողների հարաբերություններով, հաղորդակցման բնույթով:

Հետևաբար, արդի փուլում բազային մակարդակում օտար լեզվի դասավանդման նպատակները ներառում են օտարալեզու հաղորդակցական կոմպետենցիայի (խոսքային, լեզվական, սոցիալ-մշակութային, փոխհատուցման և ուսումնաճանաչողական) զարգացումը և աշակերտների զարգացումն ու դաստիարակությունը օտար լեզվի միջոցով [91, 4]:

Ասվածի լույսի ներքո, կարելի է փաստել, որ ժամանակակից դասագրքերը լիովին չեն արտահայտում ժամանակակից մեթոդական մտքի զարգացումներն, այն առումով, որ անգլերենի դասագիրքը պիտի ունենա դինամիկ կառույց և բովանդակություն և պիտի շատ արագ արձարձի ուսումնասիրվող լեզվի և հանրամշակութային բնույթի տարատեսակ փոփոխությունները:

Ինչ վերաբերում է անգլերենի ուսուցման գործընթացում միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիայի զարգացման անհրաժեշտությանը, ապա օտար լեզուներ և միջմշակութային հաղորդակցություն ուսուցանելու սերտ կապն ու կախվածությունն այնպես ակնհայտ են, որ մանրամասն պարզաբանելու կարիք գրեթե չկա: Օտար լեզվի ամեն մի դաս մշակութային խաչմերուկ է. միջմշակութային հաղորդակցության գործընթաց, քանի որ յուրաքանչյուր օտար բառ արտացոլում է օտար աշխարհի և օտար մշակույթ [56, 25]:

Ակնհայտ է միջմշակութային կոմպետենցիայի դերը և նշանակությունը լեզվի ուսուցման մեջ: Մշակույթը որոշակի ժամանակահատվածում որոշակի հասարակության կողմից ամրագրված սովորույթներն են, հավատը, արվեստը:

Ըստ Ն. Բերդիակի՝ «Հասարակական կյանքում հոգևոր առաջնահերթությունը պատկանում է մշակույթին: Ոչ թե քաղաքականության, ոչ թե տնտեսության, այլ մշակույթի մեջ է իրականացվում հասարակության նպատակները» [11, 201]:

Հիրավի, բառերի և քերականական կանոնների իմացությունը բավարար հենք չեն լեզուն որպես հաղորդակցության միջոց օգտագործելու համար: Անհրաժեշտ է որքան հնարավոր է ավելի խորը տիրապետել այն գիտելիքներին, որ վերաբերում են ուսուցանվող լեզվի երկրին:

Ըստ էության, աշխարհի մասին ընդհանուր գիտելիքների մի մասն են կազմում այն հանրության կամ հանրությունների մշակույթի ու հասարակական կյանքի մասին

գիտելիքները, որտեղ խոսում են տվյալ լեզվով: Այնուամենայնիվ, լեզուներ սովորողի համար խիստ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այս հանգամանքին, քանի որ, ի տարբերություն գիտելիքների մյուս ոլորտների, հասարակական-մշակութային բովանդակության գիտելիքները հաճախ դուրս են մնում սովորողի նախկին կենսափորձի շրջանակներից և կարող են աղավաղված լինել զանազան կարծրատիպերով (CEFR) [4, 118] [65]:

Երկրի պատմության զարգացման հիմնական ուղիների, նշանավոր դեպքերի և մարդկանց կրոնական պատկերացումների վերաբերյալ գիտելիքները, ինչպես նաև կենցաղը, տնտեսությունը և ավանդական կապերը բնորոշող երկրի աշխարհագրական դիրքն ու կլիման թեթևացնում են միջմշակութային հաղորդակցության խնդիրները: Այստեղ հարկ է նշել, որ այն դեպքում, երբ լեզվական միջոցներն ուսուցանվում են որոշակի ժամանակահատվածում՝ կախված սովորողի տարիքից և ուսուցչի հմտություններից, ապա տվյալ երկրի հետազոտական ուսումնասիրությունների շնորհիվ ոչ միշտ կարելի է գիտելիքներ ձեռք բերել այդ երկրի պատմական իրադարձությունների, աշխարհագրության, մշակույթի մասին և լիովին մասնակցել խոսակցությանը: Այս դժվարությունը հաղթահարելու համար հարկավոր է ստեղծել հաղորդակցման իրական գործընթաց, օտար լեզվի դասավանդումը կապել կյանքի հետ, ակտիվ օգտագործել լեզուն կենդանի իրադրություններում:

Ուսումնասիրելով մեր երկրի հանրակրթական դպրոցներում շրջանառվող 5-9-րդ դասարանների օտար լեզվի (անգլերենի) դասագրքերը՝ հրատարակված երկու տարբեր հեղինակների կողմից (Գ. Գասպարյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Քաջբերունի և Լ. Գրիգորյան) և այնտեղ զետեղված լեզվանյութը և վարժությունները՝ միջմշակութային հաղորդակցության զարգացման տեսանկյունից, հանգեցինք հետևյալ եզրակացության.

Գ. Գասպարյանի հրատարակած V դասարանի դասագիրքը հիմք է աշակերտների մեջ ձևավորելու միջմշակութային հաղորդակցության կարողություններ և հմտություններ: Դասագրքի վերլուծության արդյունքում ակնհայտ դարձավ, որ

դասագրքաստեղծողները ոչ մի մասնագիտական ջանք չեն խնայել այն արդյունավետ դարձնել:

Դասագիրքը հագեցած է քերականական նյութերով՝ նախդիրներ, ածականի համեմատական աստիճաններ, բայի ներկա, անցյալ, ապառնի անորոշ ժամանակաձևեր, գոյական անուն և այլն, որոնց իմացությունը հնարավորություն կտա աշակերտներին գրագետ խոսք կառուցել միջմշակութային հաղորդակցական իրավիճակներում:

Ուշագրավ է թեմատիկ բառապաշարը հարստացնելու նպատակով այնպիսի թեմաների ընտրությունը դասագրքում, ինչպիսիք են՝ տան անդամները, իմ տունը, գնումներ, հիվանդություններ (Members of the Family, My House, Shopping, Illnesses) և այլն:

Դասագիրքը ստեղծված է նաև առավելագույնս ձևավորելու աշակերտների լեզվական և մշակութային գիտելիքները: Ընթերցանության համար ընտրված տեքստերը հավանության են արժանի, քանի որ դասագրքաստեղծողներն առանձնացրել են աշակերտների կողմից շատ սիրված հեքիաթների անգլերեն տարբերակները. “The Three Bears”, “The Prince Frog”, “Ali Baba and the Forty Thieves” [102, 25- 61]:

Վերը նշված հեքիաթները բավականին հետաքրքիր են աշակերտների համար, քանի որ նրանք մեծ սիրով կընթերցեն և կվերարտադրեն իրենց արդեն իսկ ծանոթ հեքիաթներն օտար լեզվով: Տեքստերի ամրապնդման համար ներկայացված է վարժությունների համակարգ, սակայն յուրաքանչյուր տեքստին հաջորդում են միևնույն պահանջի վարժություններ.

- ✓ True or false?
- ✓ Complete the sentences.
- ✓ Answer the questions.
- ✓ Choose the correct word.

Մինչդեռ կարելի էր վարժությունների պահանջները չկրկնել՝ ընդգրկելով բազմաբնույթ այլ վարժություններ, օրինակ.

- Match the two parts of the sentences.

- Rearrange the given sentences, so that they make sense.
- Fill in the blanks using the active vocabulary.
- Translate the sentences into Armenian.
- Translate the words into English.
- Write the short summary of the text.
- Fill in the missing letters.
- Make up sentences with the mixed words.
- Make up expressions out of the given words.
- Correct the wrong sentences.

Լ. Գրիգորյանի ստեղծած V դասարանի անգլերենի դասագիրքը նույնպես պարունակում է միջմշակութային հաղորդակցությունը զարգացնող տեքստեր, որոնք ուսուցանելու նպատակով ներմուծված են բազմաթիվ վարժություններ հետևյալ պահանջներով.

- Choose the correct question word.
- Write the summary of the story.
- Do the quiz and count the points.
- Match the English sentence below with their Armenian translations.
- Match the questions with their answers.
- Write the names of the clothes starting with the letter s.

Դասագրքում ընդգրկված են նաև հետաքրքիր երգեր. "Make New Friends", "Everything At Once", "O Susanna", "Three Little Kittens", "Precocious Piggy" [107]:

Ուշագրավ է Միացյալ Նահանգների քաղաքների և նահանգների մասին դասանյութերի ընդգրկումը դասագրքում: [107, 57- 78]:

Մեր կարծիքով նմանատիպ նյութերը բավականին բարդ են այս տարիքային խմբի համար, քանի որ այսօրինակ աշխարհագրական տվյալները դեռևս չեն հետաքրքրում V դասարանի աշակերտներին: Փոխարենը նրանց առավել հոգեհարազատ կլինեին այնպիսի նյութերը, որոնք կվերաբերեին իրենց առօրյա կյանքին:

Ընդհանուր առմամբ նշված դասագրքերում ընդգրկված տեքստերը համապատասխանում են հանրակրթական դպրոցի անգլերենի առարկայական չափորոշի պահանջներին, այն է՝ *տեքստերի բովանդակությունը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, իսկ լեզուն՝ չափորոշիչների լեզվական պահանջներին* [6, 20]:

Այսպիսով 5-րդ դասարանի դասագրքերը հագեցած են այնպիսի քերականական, լեզվական և հնչյունական դասանյութերով, որոնք կձևավորեն Եվրախորհրդի լեզվական համակարգի շրջանակներում գործող լեզուների իմացության համընդհանուր սանդղակի A1 (նախնական կամ գոյատևման») մակարդակի գիտելիքներ, այն է *աշակերտը պետք է տիրապետի տարրական բառապաշարի և պարզ արտահայտությունների, որոնք առնչվում են անձնական տվյալներին և որոշակի կոնկրետ իրավիճակների, դրսևորի որոշ մտապահված պարզ քերականական կառույցների և խոսքային նմուշների սահմանափակ իմացություն (CEFR) [4, 35] [65]:*

Գ. Գասպարյանի VI դասարանի անգլերենի դասագրքում լեզվանյութի ընտրությունը այլ է: Դասագրքաստեղծողներն առանձնակի տեղ են հատկացրել այս տարիքային խմբին հետաքրքրող հեքիաթներին և լեգենդներին. “Robin Hood and his Merry Men”, “The Well at the World’s End” (Scottish folk-tale), “The Story of Bottle Hill” (an Irish Legend), “The Scotsman and the London Judge’s Daughter” (a Scottish folk-tale), “Red-Hat Otter” (a Welsh legend) [103]:

Հայերենում ևս ունենք նմանատիպ լեգենդներ և հեքիաթներ, որոնք զուգահեռաբար կարելի էր ընդգրկել դասագրքում՝ կրճատ տարբերակով:

Ինչ վերաբերում է նշված տեքստերին հաջորդող վարժություններին, ապա դրանք բավականին ընդգրկուն են. 1. Complete the statement correctly. 2. What happened when...? Finish the sentences. 3. Right or wrong? 4. Why? because... 5. Things to think about. 6. What’s the word for? 7. Fill in the missing words.

Էջ 71-ում տրված է Անգլիայի ուտեստների, իսկ էջ 101-ում՝ Անգլիայի եղանակի մասին պատմող տեքստեր [103, 71-101], որոնք կհարստացնեն աշակերտների մշակութային գիտելիքները: Վերը նշված լեզվանյութերը բավականին ծավալուն են:

Փոխարենը դրանք կարելի էր ավելի հակիրճ ներկայացնել՝ համեմատելով հայկական ավանդական ուտեստների և եղանակի հետ:

Ինչ վերաբերում է Լ. Գրիգորյանի 6-րդ դասարանի դասագրքին, ապա ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից հեղինակն ընտրել է տարբեր թեմաներ (գնումներ, եղանակ, կենդանական աշխարհ, հագուստներ, բանջարեղեններ), որոնց հաջորդում է համապատասխան բառապաշարը:

Դասը միօրինակ չանցկացնելու նպատակով դասագրքում ներառվել են հետաքրքիր երգեր ("Sound of Music", "Jingle Bells" etc) [108, 19-87], բանաստեղծություններ ("Help", "Books", "The Wind" etc) [108, 14- 73] և թեստեր, որոնք բնութագրում են աշակերտներին ըստ իրենց ընտրած տարբերակների:

Հատկանշական է այն, որ հեղինակը չի անտեսել այնպիսի արդիական թեմաներ, որոնք վերաբերում են համակարգիչներին ("Computer Chat Friends", "The Crazy Computer") [108, 48-50]:

Առավել ուշագրավ է Հայաստանի վերաբերյալ ուսումնական նյութերի ընտրությունը ("Welcome to Sunny Armenia"), որոնք իրազեկում են Հայաստանի մայրաքաղաքի, ազգային արժեքների, եղանակի և այլնի մասին: Այս դասանյութերը կարևորվում են նրանով, որ աշակերտները համապատասխան բառապաշար են ձեռք բերում ազատ հաղորդակցվելու և իրենց երկիրը ներկայացնելու համար:

Սույն դասագրքում հաճախ ենք հանդիպում հաղորդակցական կոմպետենցիան զարգացնող կապակցված նկարների: Ըստ տրված պահանջի աշակերտները ներկայացնելու են նկարներով պատկերված պատմությունը: Սակայն, մեր կարծիքով, նմանատիպ առաջադրանքները 6-րդ դասարանի աշակերտների համար բավականին բարդ են, քանի որ առաջադրանքում պատկերված է տասից ավելի նկար, իսկ նկարի ներքևում տրված է ընդամենը 3-5 օգնող բառ կամ բառակապակցություն: Օրինակ՝ էջ 64-ում տրված են նկարներ՝ վերնագրված "March Weather", իսկ այդ 12 պատկերը ներկայացնելու համար տրամադրվում են ընդամենը to sweat, shower, to tie a scarf բառաշարքը: Ցանկալի կլիներ ներառել նյութին վերաբերող առավել հարուստ բառաշարք:

Հետևաբար, կարելի է փաստել, որ 6-րդ դասարանի դասագրքերը ներառում են այնպիսի դասանյութեր, որոնք աշակերտների մոտ հնարավորինս կծնավորեն լեզուների իմացության համընդհանուր սանդղակի A1 մակարդակի գիտելիքներ, այսինքն՝ *աշակերտը պետք է օգտագործի համառոտ, հիմնականում նախապատրաստված առանձին արտահայտություններ, կարողանա փոխ անձնական բնույթի հարցեր և պատասխանել նման հարցերին, կարողանա իրար կապել մի շարք բառեր կամ բառերի խմբեր այնպիսի հասարակ գծային հաջորդականություն արտահայտող շաղկապերով, ինչպիսիք են «և»-ը կամ «ապա»-ն (CEFR) [4, 35] [65]:*

Գ. Գասպարյանի 7-րդ դասարանի դասագրքի առաջին գլուխն ամբողջովին տրամադրում է տեղեկատվություն աշխարհագրությունից [104, 4-11]:

Այս բաժնում աշխարհագրական եզրույթների հարուստ բառապաշար է ներմուծված: Դասագրքում պատկերված քարտեզների միջոցով աշակերտները յուրացնում են աշխարհագրական տեղանունների անվանումներն անգլերեն լեզվով, իսկ մի շարք վարժություններ մշակված են արդեն ձեռք բերած գիտելիքներն ամրապնդելու նպատակով: Սակայն դասագրքում կարելի էր անդրադառնալ նաև Հայաստանի աշխարհագրական դիրքին և մի քանի այլ կարևոր տեղանուններին:

Դասագրքում տեղ են գտել հայտնի գրողների ուսանելի պատմվածքների կրճատ տարբերակները. “The King is Crowned” (Mark Twain), “Three Men in a Boat” (Jerome K. Jerome), “The Young Border-Guards” (O. Henry) և այլն [104, 27- 72]:

Ուշագրավ կլիներ, եթե աշակերտներն անգլերեն լեզվով զուգահեռաբար ընթերցեին Խնկո-Ապոր առակներից, Բաժակ Գյուլնազարյանի պատմվածքներից կամ Սերո Խանզադյանի արկածային ստեղծագործություններից որոշ հատվածներ:

Ինչ վերաբերում է Լ. Գրիգորյանի 7-րդ դասարանի դասագրքին, ապա ուշագրավ է արդիական թեմաների ընտրությունը՝ կապված ինտերնետի, համակարգչային խաղերի, բջջային հեռախոսների հետ, որոնք աշակերտներին իրազեկում են վերջիններիս օգտակար և վնասակար հատկություններին [109, 37-67]:

Դասագրքում տեղ գտած երթևեկությանը, հեռախոսային խոսակցությանն առնչվող բառապաշարը հնարավորություն է տալիս աշակերտներին անկաշկանդ

հաղորդակցվել նաև այս թեմաների շուրջ: Զուգահեռաբար, նրանք ծանոթանում են հեռախոսով խոսելու էթիկային, փողոց անցնելու և ավտոմեքենայով ընթանալու տարրական կանոններին [109, 72]:

Էջ 108-ում պատկերված են Հայաստանի մշակութային արժեքներ ներկայացնող կոթողներն ու հուշարձանները և տրված են նրանց անվանումները, որոնք աշակերտները պետք է համապատասխանեցնեն: Սակայն ցանկալի էր, որ որոշակի ընդհանուր տեղեկատվություն մատուցվեր յուրաքանչյուր պատկերի վերաբերյալ: Այս պարագայում ուսուցիչը կարող է լրացնել այս բացը. լրացուցիչ առաջադրանք հանձնարարել աշակերտներին, ովքեր երկու ցանկացած նկարի վերաբերյալ տեղեկություններ կներկայացնեն:

Հատկանշական է դասագրքում հանդիպող երկու մշակույթներին բնորոշ բառապաշարի տարբերակումը: Հեղինակը պարբերաբար անդրադարձել է ամերիկյան և բրիտանական ժողովուրդների կողմից կիրառվող բառապաշարին, որը կրկին անգամ միտված է զարգացնելու միջմշակութային հաղորդակցությունը:

Օրինակ՝	BrE	AmE
	phone	call
	tube	underground
	pavement	sidewalk
	single ticket	one way ticket

Հատկապես կարևորվում է դասագրքում նոր բառապաշար ներկայացնելիս հայերեն լեզվով թարգմանությունները: Սա թույլ է տալիս մտապահել նորածանոթ բառերն իրենց թարգմանություններով, քանի որ աշակերտների մոտ առավել զարգացած է տեսողական հիշողությունը:

Մշակույթի վերաբերյալ գիտելիքների հարստացման կարևորագույն խթան է արվեստի տարբեր ոլորտների ուսումնասիրությունը (երաժշտության, ֆիլմեր): Այս առումով 7-րդ դասարանի դասագրքում տվյալ լեզվանյութի պակաս չի նկատվում: Ավելին՝ թեմաների ամրապնդման նպատակով մշակված է համապատասխան վարժությունների համակարգ:

Աննկատ չի մնում նաև աշխարհագրական տեղեկատվությունը, որ վերաբերում է երկրների մայրաքաղաքներին և ազգություններին, դրոշներին և հայտնի քաղաքներին, սակայն դասագրքում ընդգրկված չէ պատմությանը վերաբերող որևէ դասանյութ:

Հաշվի առնելով դասագրքերում առկա նյութերն ու վարժությունները՝ ուսուցիչը պետք է կարողանա աշակերտների գիտակցության մեջ առավելագույնի հասցնել A1 մակարդակի գիտելիքները և ինչ-որ չափով հիմք դնել A2 մակարդակի համար պահանջվող որոշ դրույթներ. օրինակ՝ *աշակերտը պետք է կարողանա ընկալել կարճ, հստակ, պարզ հաղորդագրությունների ու հայտարարությունների հիմնական իմաստը, կարդալ շար կարճ, պարզ տեքստեր, հաղորդակցվել պարզ, առօրեական խնդիրների շուրջ (CEFR) [4, 32] [65]:*

Գ. Գասպարյանի հեղինակությամբ լույս տեսած 8-րդ դասարանի դասագիրքը բավականին շատ տեղեկատվություն է տալիս աշակերտներին աշխարհագրությունից. “Travelling to Britain”, “The Channel Tunnel”, “Flying over the Water”, “The United Kingdom”, “Pictures of London Where the Tourists Go”, “Welcome to Wales”, “Scotland”: Հետաքրքիր լեգենդները պատմում են տարբեր արքայազների և Արթուր թագավորի մասին. “The Prince of Wales”, “The Legend of King Arthur”, “Bonnie Prince Charlie” [105, 3-67]: Տեքստերին հաջորդում են մի շարք վարժություններ:

“Going to School in Britain” վերնագրով տեքստում նկարագրվում են անգլիացի աշակերտներն ու նրանց դպրոցական կյանքը: Ցանկալի կլիներ դասագրքում որոշակի տեղեկատվություն տրամադրվեր նաև այն մասին, թե հայ երեխաները դպրոցում ինչ առարկաներ են ուսումնասիրում, ինչպես են հազնվում և այլն [105, 95]:

Աշակերտների միջմշակութային կոմպետենցիան զարգացնող նմանատիպ տեքստերից զատ՝ ուշագրավ է այն, որ դասագրքում որպես վարժություններ ընդգրկված են բազմաթիվ տեքստեր, որոնք նախատեսված են ոչ միայն ամրապնդելու այս կամ այն քերականական նյութը, այլև միաժամանակ տալիս են հետաքրքիր տեղեկատվություն մշակույթի տարբեր ոլորտներից: Օրինակ՝ էջ 13-ում տրված №2 վարժությունը ըստ պահանջի առաջադրում է բաց թողնված տեղերում

լրացնել ակտիվ բառապաշարից ընտրված բառերը, միևնույն ժամանակ այն պատմում է անգլիացիների քչախոսության և ֆրանսիացիների շատախոսության մասին, կամ էջ 16-ում տրված №2 վարժությունը, որ ընտանեկան մի փոքր պատմություն է, և պահանջվում է բաց թողնված տեղերում լրացնել եղանակավորող բայերը:

Դասագրքում ընդգրկված է մշակութային բովանդակության լեզվանյութ՝ վերնագրված “Did you know...”: Օրինակ՝ էջ 55-ում կարելի է տեղեկանալ Ուելսում հայտնի ամրոցների, իսկ էջ 71-ում՝ հեռախոսի գյուտարար՝ Ալեքսանդր Բելի և հեռուստացույցի գյուտարար՝ Ջոն Բեռլոդի մասին, ովքեր շոտլանդացիներ են:

Այս համատեքստում կրկին կարևորելով միջմշակութային կոմպետենցիայի դերը ուսուցման գործընթացում՝ չենք կարող չհամաձայնել Լ. Ս. Վիգոտսկուի հետ, ով իր աշխատություններում բազմիցս նշել է, որ աշակերտի մշակութային զարգացվածությունը համարվում է բարձր հոգեբանական գործառույթ [16], [17]:

Ց-րդ դասարանի դասագրքում հաճախ կարելի է հանդիպել երկխոսությունների, որոնք նպաստում են նոր բառապաշարի ուսուցմանը: Երկխոսություններ կարելի է հանդիպել նաև առաջադրվող վարժությունների մեջ, որտեղ տրված երկխոսության մեջ բաց են թողնված ակտիվ բառապաշարից վերցված բառեր, կամ նոր քերականական նյութին վերաբերող ժամանակաձևեր: Օրինակ, դիտարկենք էջ 89-ում առաջադրվող №1 վարժությունը, որի պահանջն է լրացնել բաց թողնված բառերը.

Mrs. Smith: Good morning Mrs. Jones. How are your sons?

Mrs. Jones: Terrible! Bob has such a rich imagination that he never stops playing tricks on us and Henry has such a poor imagination that he never stops believing him.

Mrs. Smith: Oh, It must be very funny.

Mrs. Jones: Funny? Just imagine a boy running into your room with a sad expression on his face and eyes full of tears.

Mr. Smith: And what?

Mrs. Jones: And he tells you that the house opposite us is burning and the people in it are crying for help.

Mrs. Smith: Oh, dear!

Mrs. Jones: So you run out of the room and find out it is just an April Fool's trick.

Mrs. Smith: Well, now I guess what you feel each time he plays tricks on you.

Mrs. Jones: Oh, I'm so unhappy. I can't even express my feelings. You see, when he was a small boy we admired his imagination and laughed at his funny stories.

Mrs. Smith: It's quite natural!

Mrs. Jones: But as he is growing older his imagination is getting richer, too.

Mrs. Smith: Poor you!

Mrs. Jones: So I expect something special on this April Fool's Day. Oh, I hear his steps.

Այսօրինակ վարժությունները, անշուշտ, միտված են զարգացնելու աշակերտների ճանաչողական-հաղորդակցական կարողությունները: Վերջիններս նպաստում են աշակերտների հիշողության մեջ ամրագրելու նորածանոթ բառեր, և միաժամանակ ուսուցանելու առօրյա-խոսակցական ոճին բնորոշ այնպիսի արտահայտություններ ինչպիսին են՝ Terrible!, It must be very funny., Oh, dear!, Oh, I'm so unhappy., It's quite natural!, Poor you!.

Դասագրքում՝ ցանկալի կլիներ ներառել մայրենի լեզվի մշակույթը, քանի որ ըստ հանրակրթական հիմնական դպրոցի «անգլերեն» ուսումնական առարկայի ծրագրի՝ սովորողները պետք է կարողանան ծրագրով նախատեսված համապատասխան իրադրություններում և ծանոթ թեմաների շրջանակներում խոսել ինքնուրույնաբար, տրամաբանորեն, ներկայացնել իր երկրի և ժողովրդի հանրամշակութային պատկերը:

Սույնը փաստում է նաև Պ.Վ. Սիսուեր. «Համաձայն ընդհանուր միջնակարգ կրթության պլանի, դպրոցական ուսումնական պլանը պիտի ներառի տարածաշրջանային բաղադրամասը, որի համար հատկացվում է ընդհանուր ուսումնական ժամերի քանակի ծավալի 10 և ավելի տոկոսը (շաբաթը 2-3 ժամ): Այդ ժամանակը պիտի օգտագործվի ուսումնական պլանը որոշակի տարածաշրջանի կամ ռեգիոնի մասին նյութերով հարստացնելու համար» [91, 7]:

Անշուշտ, դասագրքի հեղինակները հաշվի են առել այն հանգամանքը, որ մայրենի լեզվին ու մշակույթին աշակերտները կարող են ծանոթանալ այլ առարկայական դասագրքերից: Ինչ խոսք, միանգամայն այլ իրողություն է, երբ քո երկրի մշակույթն ու լեզուն ուսումնասիրվում են մայրենի լեզվով, և խիստ տարբեր է, երբ դա արվում է օտար լեզվով: Սա վերաբերում է նախ և առաջ երկու լեզուների բառապաշարին, քերականական, հնչյունական, բառային փոխներթափանցման դրսևորումներին:

Մինչդեռ էջ 80-ում տրված “Holidays and Customs” վերնագրով տեքստը, որ տալիս է հակիրճ տեղեկատվություն բրիտանական տոների և ավանդույթների մասին, ներառում է հայկական տոներին առնչվող հարցեր, որոնք ուղղված են աշակերտներին: Օրինակ՝ What happens in Armenia on April 1st? Can you think of a good April Fool’s trick? Can you tell the class about it? What are the customs in Armenia at Easter? Are they the same as in Britain? How is Christmas different in Armenia? What do you do on New Year’s Eve? Տրված յուրաքանչյուր հարցի համար աշակերտից պահանջվում է բավարար չափով լեզվափմացություն, բովանդակալից պատասխան տալու համար: Հետևաբար նա պետք է տիրապետի թեմատիկ բառապաշարի, ինչպես նաև որոշակի տեղեկատվության տվյալ տոնի և ավանդույթի վերաբերյալ:

Համեմատական կտրվածքով ուսումնասիրեցինք խորհրդային տարիների ռուսական միջնակարգ դպրոցների 8-րդ դասարանի դասագիրքը, քանի որ մեզ բոլորիս հայտնի է այդ ժամանակահատվածի կրթական համակարգի գրեթե կատարյալ լինելու փաստը: Դասագրքում Լոնդոնի, Վաշինգտոնի, Նյու Յորքի մասին պատմող դասանյութերի հետ զուգահեռաբար տեքստեր են ընդգրկված Մոսկվայի, Կրասնոդարի երկրամասի, Սովետական միության երկրների մասին: Անգլիացի և ամերիկացի հայտնի մարդկանց մասին տեղեկանալով՝ (Մայքլ Ֆարադեյ, Վիլյամ Շեքսպիր, Ռոբերտ Բըրնզ, Աբրահամ Լինկոլն, Մարկ Տվեն) սովորողները ծանոթանում են նաև Յուրի Գագարինի և Լենինի կենսագրական տվյալներին [113, 75- 127]:

Ինչ վերաբերում է Լ. Գրիգորյանի դասագրքին, ապա դասագրքի բաժին 2-ը և 3-ը նվիրված են հեռահաղորդակցման միջոցներին՝ համակարգիչ, հեռուստացույց,

նադիո: Հարկ է նշել, որ արդեն նախորդ դասագրքերում համակարգչի մասին քննարկվել է, իսկ թեմայի ավելի բարդացված տարբերակը կարող է ծանծրացնել աշակերտներին, քանի որ նրանք բախվում են բավականին բարդ եզրույթների, որոնց հայերեն տարբերակները կամ չկան, կամ թարգմանվում են ականջի համար ոչ այնքան լսելի բառերով:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից էական է դասագրքում Բրիտանիայի, Ամերիկայի ինչպես նաև Հայաստանի տեսարժան վայրերին առնչվող լեզվանյութի ընտրությունը: Հեղինակը Հայաստանի մշակույթին անդրադարձել է նաև էջ 112-ում, որտեղ նյութեր են տրամադրվում Հայաստանի պատմությունից, իսկ էջ 114-ում հաղորդվում է տեղեկություններ հայկական անունների և ազգանունների ստեղծման սկզբնաղբյուրից: Իսկ էջ 116-ում մի ամբողջ դաս նվիրված է Վ. Սարոյանի կենսագրությանը և աշխատանքային գործունեությանը:

Դասագրքում կրկին տեղ են գտել նկար-պատմությունները, որոնք հավանության արժանի չեն, քանի որ նշված թեմաները նկարագրելը բավական բարդ է, այն դեպքում, երբ որոշ նկարների համար նույնիսկ 2-3 հուշող բառ չի տրամադրվում:

Համենայնդեպս նշված դասագրքերում զետեղված լեզվանյութը կարող է այս տարիքային խմբի աշակերտներին ապահովել լեզուների իմացության համընդհանուր սանդղակի A2 («Մինչջեմային») մակարդակի նվազագույն գիտելիքները, որոնք թույլ կտան աշակերտներին. *օգտագործել հիմնական շարահյուսական կառույցներ և կայուն արտահայտություններ, բառակապակցություններ և խոսքային միջոցներ առօրյա պարզ իրավիճակներում սահմանափակ տեղեկություններ փոխանակելու նպատակով, կարողանալ մտքերը հասկանալի դարձնել խիստ համառոտ արտահայտություններով և գրել շար պարզ անձնական նամակ (CEFR) [4, 32-35] [65]:*

Ուսումնասիրելով Գ. Գասպարյանի 9-րդ դասարանի դասագիրքը՝ պարզեցինք, որ, ինչպես 5-8-րդ դասարանների դասագրքերում, այնպես էլ այս դասագրքում տեքստերի ընտրությունը խիստ ճշգրիտ է կատարված: Աշակերտները ծանոթանում են ամերիկացի և անգլիացի հայտնի հեղինակների այնպիսի ստեղծագործությունների, ինչպիսիք են. “A String of Beads” (S. Maugham), “Crabb’s

Practice”(A. Conan Doyle), “Daily Bread” (O’Henry), “The Pickwick Club” (Charles Dickens), “While the Auto Waits” (O’Henry) [106]:

Ցանկալի կլիներ, եթե դասագրքում ընդգրկված լինեին նաև հայ հեղինակների՝ Ստեփան Զորյանի, Ակսել Բակունցի, Շիրվանզադեի պատմվածքների անգլերեն թարգմանությունների կրճատ տարբերակները: Այս դեպքում ուսուցիչները հնարավորություն կունենային կազմակերպել ինտեգրված դաս, որի ընթացքում կքննարկեին նույն դարաշրջանի հայ և ամերիկացի կամ անգլիացի հեղինակների կենսագրությունները, գրվածքները, և կկատարեին համապատասխան վերլուծություններ:

Դասագրքում ներմուծված է Did you Know... ? վերնագրով դասանյութ, որը կարելի է հանդիպել յուրաքանչյուր գլխում: Այս նյութերը տեղեկատվական միակ միջոցն են 5-9-րդ դասարանների դասագրքերում, որոնք որոշ տվյալներ են հաղորդում Հայաստանի մասին: Օրինակ՝ էջ 7-ում հակիրճ ներկայացվում է հայկական այբուբենի ստեղծման մասին, էջ 36-ում նկարագրվում է Երևանը որպես հնագույն քաղաք, էջ 55-ում տրվում է Երևանի անվան հետ կապված բացատրություններ, էջ 71-ում աշակերտները տեղեկանում են, որ Երևանը կրթական մեծ կենտրոն է: Նշված նյութերը բազմաբնույթ չեն, հիմնականում պարունակում են պատմական փաստեր, որոնք տրված են շատ հակիրճ: Մինչդեռ կարելի էր ներառել լեզվանյութեր տարբեր բնագավառներից՝ երկու երկրների համապատասխան երևույթները համեմատելու նպատակով:

Լ. Գրիգորյանի 9-րդ դասարանի դասագրքի վերլուծության արդյունքում կարևորվել են դասագրքում հաճախակի հանդիպող աֆորիզմները, ասույթներն ու ասացվածքները, որոնք հարստացնում են աշակերտների խոսքային կարողությունները:

Բաժին 2-ն ամբողջովին նվիրված է արվեստի ոճերին և այդ ոճերում ստեղծագործած հայտնի նկարիչներին և նրանց գործերին. Պաբլո Պիկասո, Վինսենթ վան Գոգ, Սալվադոր Դալի, Հենրի Մատիս, Լեոնարդո դա Վինչի և այլոք: Իսկ բաժին 5-ը ամբողջովին նվիրված է հայկական մշակույթին՝ մասնավորապես հայ անվանի արվեստագետներին (Կոմիտաս Վարդապետ, Աննո Բաբաջանյան, Արամ

Խաչատրյան, Սերգեյ Փարաջանով, Արշիլ Գորկի, Շարլ Ազնավուր և այլն): Նշված թեմաների ուսուցումը նպաստում է աշակերտների հանրամշակութային գիտելիքների հարստացմանը:

Հավանության են արժանի դասագրքում ներմուծված Բիթլզի, Լուի Արմստրոնգի և Ջորջ Գերշվինի երգերը, որոնք դասերը դարձնում են երաժշտական և տարբերվող [11]:

Հատկանշական է դասագրքի վերջում տեղադրված հավելվածը, որտեղ գծագրերի և պատկերների միջոցով քերականական նյութեր են ներկայացված (խոսքի մասեր, մոդալ բայեր, նախածանցների և վերջածանցների ցանկ, ֆրազային բայեր և այլն): Վերոնշյալ նյութերը կհեշտացնեն թե՛ ուսուցչի և թե՛ աշակերտի աշխատանքը:

Ցանկալի էր, որ 9-րդ դասարանի դասագրքերը համապատասխանեին լեզուների իմացության համընդհանուր սանդղակի A2 մակարդակին ներկայացվող պահանջներին: Այս մակարդակում է, որ ի հայտ են գալիս լեզվի սոցիալական գործառույթներն արտացոլող ցուցիչների մեծ մասը, ինչպես՝ աշակերտը «կարող է օգտագործել առօրյա ողջույնի և դիմելու հարգալից ձևերը», «ողջունել մարդկանց, հարցնել որպիսությունը և արձագանքել նորություններին», «կարող է հասկանալ իր համար անմիջական կարևորություն ունեցող թեմաներին (անձնական և ընտանեկան հիմնական տվյալների, գնումների, տեղանքի աշխարհագրության, աշխատանքի մասին) առնչվող բառակապակցություններ ու արտահայտություններ՝ պայմանով, որ խոսքը լինի հստակ և դանդաղ» (CEFR) [4, 38] [65]:

Ուստի հաշվի առնելով վերը նշված թերությունները և բացթողումները դասագրքերում՝ մշակեցինք մեթոդական համակարգ, որը կոչված է լրացնելու առկա բացերը: Այն կարող է նաև համարվել ուղեցույց ուսուցիչների համար, որում ներառված դասանյութերը նպաստավոր կլինեն կիրառել դասապրոցեսին դասագրքերում ընդգրկված նյութերին զուգահեռ: Մեթոդական համակարգը մշակվել է առարկայական չափորոշյով ձևավորած թեմաներին համապատասխան:

5-րդ դասարան

THEME

ANIMALS

Task 1. Study the names of the given animals with their proper pronunciations.

Hedgehog ['hedʒhɒg]	rabbit ['ræbɪt]	goat [gəʊt]
rhinoceros [raɪ 'nɒsərəs]	hare [heə]	sheep [ʃi:p]
turtle ['tɜ:tl]	goose [gu:s]	swan [swɒn]
giraffe [dʒɪ 'rɑ:f]	duck [dʌk]	elephant ['elɪfənt]
camel ['kæm(ə)l]	squirrel ['skwɪrəl] .	pig [pɪg]
turkey ['tɜ:ki]	kangaroo [,kæŋgə 'ru:]	zebra ['zebrə]
cock ['kɒk]	donkey ['dɒŋki]	
hippopotamus [,hɪpə 'pɒtəməs]		

Task 2. Divide the animals into domestic and wild using the T-chart.

Domestic	Wild
dog	wolf

Task 3. Study the active vocabulary.

Special	wildlife	job	medical	popular	mice
species	to include		crowd	passerby	
	unique	wander			

Task 4. Read, translate and retell the texts.

ANIMALS IN GREAT BRITAIN

People in Great Britain like animals. There are even special hospitals, which help wild animals. There are a lot of television films about wildlife. They are very popular with children and grown ups. A lot of British families have 'bird tables' in their gardens. Birds

can eat from them during the winter months. The 'bird table' should be high because cats can eat birds.

The British often think their animals are like people. For example in Britain animals can have jobs like people. British Rail has cats and pays them for their work. Their job is to catch mice. There is usually one cat per station. They get food and free medical help. The cats don't catch a lot of mice but they are very popular with the British Rail staff and travellers.

ANIMALS IN ARMENIA

The wildlife of Armenia includes brown bears, various lizards, long-eared hedgehogs, red deer, snakes, Persian leopards etc. About 350 different bird species were recorded in the country.

Armenians are fond of animals but few Armenian families keep dogs or cats. Instead, in the city center, dogs wander the streets looking for food, some chewing on paper or anything they can find to fill their empty bellies. Others sit patiently on the sidewalks, occasionally trying to follow passerbys home.

Armenian Gampr is a dog unique to the region with prehistoric bloodlines, but these dogs are only a few of the many homeless animals that crowd the streets.

Task 5. True or false?

1. People in Great Britain do not like animals.
2. There are a lot of television films about animals.
3. In Britain animals have jobs.
4. Many Armenian families keep domestic animals.
5. In Armenia dogs can be seen everywhere in the city.
6. Gamprs also wander the streets.

Task 6. Fill in the gaps using words from the active vocabulary.

1. We like to watch films about

2. Animals in Britain get free ... help.
3. Cats can catch a lot of
4. In Armenia many dogs ... the streets.
5. Gampr is a ... dog in the region.
6. Dogs sometimes follow ... home.


Task 7. Guess the riddles and match them with the pictures.

They are not tailors,
But needles they have,
They are the enemy
Of the snakes' family.

I give the world a baby,
Every seven years.
Guess who am I
So clever and kind?

It's big and wild,
Is fond of honey,
As soon as winter comes
Goes to sleep so fast.

I have a nice tail,
And a red crest,
I wake the people
Early in the morning.



Task 8. Listen to the song and sing in chorus.

Old MacDonald Had A Farm

Old MACDONALD had a farm
E-I-E-I-O
And on his farm he had a cow
E-I-E-I-O
With a moo moo here
And a moo moo there
Here a moo, there a moo
Everywhere a moo moo
Old MacDonald had a farm
E-I-E-I-O.

Old MACDONALD had a farm
E-I-E-I-O
And on his farm he had a duck
E-I-E-I-O
With a quack quack here
And a quack quack there
Here a quack, there a quack
Everywhere a quack quack
Old MacDonald had a farm
E-I-E-I-O.

Old MACDONALD had a farm
E-I-E-I-O
And on his farm he had a pig
E-I-E-I-O
With a oink oink here
And a oink oink there
Here a oink, there a oink

Old MACDONALD had a farm
E-I-E-I-O
And on his farm he had a lamb
E-I-E-I-O
With a baa baa here
And a baa baa there
Here a baa, there a baa

Everywhere a oink oink
 Old MacDonald had a farm
 E-I-E-I-O.

Everywhere a baa baa
 Old MacDonald had a farm
 E-I-E-I-O.

Task 9. Find 5 domestic and 5 wild animal names in the given puzzle.

d	a	z	s	q	u	i	r	r	e	l
b	u	t	o	e	s	w	v	i	c	m
t	u	r	t	l	e	h	d	u	c	k
y	a	y	t	k	b	e	i	f	k	n
g	t	v	i	j	r	a	b	b	i	t
w	n	x	e	m	b	o	e	d	t	u
h	m	c	l	u	q	n	u	s	g	w
l	d	a	e	n	g	h	a	h	p	h
c	o	e	p	r	o	l	d	e	k	a
d	n	f	h	a	a	j	f	e	e	r
i	k	s	a	p	t	r	r	p	q	e
w	e	o	n	t	w	s	o	n	i	m
b	y	h	t	t	o	c	a	m	e	l

7-րդ դասարան

THEME

FRIENDSHIP

Task 1. Read the verse and learn it by heart:

The Best of Friends

The best of friends,
 Can change a frown,
 Into a smile,
 When you feel down.

The best of friends,
 Will always share,
 Your secret dreams,
 Because they care.

The best of friends,
 Will understand,
 Your little trials,
 And lend a hand.

The best of friends,
 Worth more than gold,
 Give all the love,
 A heart can hold.


Task 2. Study the given adjectives and choose three positive adjectives you want your friend to be and three negative adjectives you don't want him/her to be and fill in the circles:

Positive

Good, honest, polite, beautiful, kind
hard-working, brave, strong, clever,
friendly, modest, helpful.

Negative

Silly, coward, dishonest, impolite,
lazy, ugly, greedy, cruel, envious,
sly.



Task 3. Read the text and insert the proper prepositions.

The Bad Friend

Two friends went ... the forest for hunting. Soon they came across a big brown bear. One the boys climbed ... the tree immediately, while the other one lay ... the ground and pretended to be dead. The bear came up to him scented him, and went ... thinking he was dead. The boy came down ... the tree, laughed and asked:

“Did the bear say anything ... your ear?”

“Yes, the bear told me never to go hunting ... such a friend who leaves you alone when there is a danger”.

Task 4. Match the given proverbs keeping their meanings and learn them.

1. A friend in court is better than a penny in purse.
2. A friend in need is a friend indeed.
3. A friend's frown is better than a foe's smile.
4. False friends are worse than open enemies.
5. Even reckoning makes long friends.

1. Մի ունեցիի հազար ոսկի, այլ ունեցիի հազար ընկեր:

2. Լավ է լսես ընկերոջդ դառը ճշմարտությունը, քան՝ թշնամուդ շողոքորթությունը:

3. Հաչող շունը չի կծում, այլ այն մեկը, որ լուռ պոչն է շարժում:

4. Հաշվարկված ընկերությունը խոչընդոտ չէ:

5. Լավ ընկերը նեղ օրվա ընկերն է:

Task 5. Read, translate and study the given information.

How to Make Friends in Armenia

A language exchange with a pen pal from Armenia is an excellent way to make a friend from Armenia, learn about its culture and improve your foreign language skills.

This type of exchange is suitable for language learners of all skill levels, even beginners. Because you have a common goal to help each other learn while discussing common interests, you are likely to make meaningful friendships.

Compared to live conversation, there is less pressure, because you can take your time to use a dictionary or refer to your lessons at a time of your convenience. It is also a great way to improve your writing, reading and grammar skills.

How to get in touch with friends in the UK

If you are working or studying overseas in the UK you may at first find it hard to make British friends. These are some things you can try:

1. Go up to people and introduce yourself, rather than waiting for them to come up to you.
2. Keep speaking, without worrying too much about grammar. Often the person can understand what you are saying.
3. If you can't remember an English word you want to use, try not to use a dictionary - describe what you mean using other words or pictures.
4. If you can't understand the general idea of what the person is saying, ask him or her to explain in a different way.
5. If you think you understood but you aren't sure, you can check by asking, "Do you mean?"
6. Try to be cheerful when you are talking. British people like joking. Don't feel pressure to laugh at their jokes (a confused smile may be enough).
7. Don't keep apologising for your poor English. Your English ability is probably much better than the other person's foreign language ability!

Task 6. Speak on the mentioned items.

1. Discuss with your friends which of the things are familiar to you and which are not.
2. Will you be able to use all of them or not?
3. Distinguish the points which are difficult for you to use.

Task 7. Read the dialogue and try to act it with your classmates:

The phone rang:

A: Hi, Sally. What are you doing?

B: Hi, Linda. I have a terrible toothache and don't know what to do.

A: Ask your mother to give you some medicine.

B: I am alone at home. My parents will be back late in the evening. Anyway, don't worry about me.

A: You don't say so. I'll come to you in some minutes.

B: Sally I know that today is your sister's birthday party. Please don't come.

A: Never mind. My sister will forgive me. A friend in need is a friend indeed.

B: Oh, my dear friend I love you so much.

A: See you soon.

8-րդ, 9-րդ դասարանների դասանյութերը տե՛ս հավելված 2, 3:

Այսպիսով, ուսումնական նյութերը կազմելիս կարևորվել է այն, որ չափորոշչով նախատեսած թեմայի վերաբերյալ հնարավորինս տեղեկատվություն տրամադրել, համապատասխան բառապաշար ներմուծել, բազմաբովանդակ վարժություններ ընդգրկել, որոնք հնարավորություն կտան աշակերտին ձեռք բերած գիտելիքներով մասնակցել միջմշակութային ցանկացած հաղորդակցության:

Այս տեսանկյունից կրկին կարևորում ենք դասագրքի հարցը, որը ոչ միայն ուղեցույց է ուսուցչի համար, այլև՝ հարուստ տեղեկատվական աղբյուր աշակերտների համար: Այն պետք է հագեցած լինի մատչելի, տեղեկատվության տեսանկյունից հետաքրքիր նյութերով, որոնք նպատակաուղղված կլինեն աշակերտների ճանաչողական-հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

2.2. Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի վերլուծության հիմնախնդիրը՝ փոների և ավանդույթների տեսանկյունից

Միջմշակութային հաղորդակցական կարողություններ ձևավորելու կարևորագույն պայման է ուսումնասիրել ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը՝ իր ազգային տոներով ու ավանդույթներով հանդերձ: Յուրաքանչյուր աշակերտ պետք է գիտակցի, որ ամեն մի ազգ և պետություն արժևորվում է իր ինքնատիպ ավանդույթներով և սովորույթներով, որոնք կերպավորում են տվյալ ազգը, տալիս նրա անփոխարինելի նկարագիրը: Ազգային ավանդույթները՝ որպես ազգային մշակույթի բաղադրատարրեր, ամրակայում են տվյալ ժողովրդի կենսաձևը՝ ազգային երգերը, առածները, ասացվածքները, ինչպես նաև այս ժողովրդի ուտեստը:

«Ավանդույթ» բառը ծագել է լատիներենից (traditio) և նշանակում է «փոխանցում»: Ավանդույթը սոցիալական և մշակութային ժառանգության բաղադրատարր է, որը փոխանցվելով սերնդեսերունդ՝ երկար ժամանակ պահպանվում է հասարակության մեջ և սոցիալական խմբերում: Սա վերաբերում է մշակութային արժեքներին, գաղափարներին, մարդկային վարքագծին, ինչպես նաև ծեսերին և սովորություններին: Այս բնորոշմամբ, «ավանդույթ» հասկացությունը լիովին նույնանում է ժառանգություն «հասկացության» հետ:

«Ավանդույթ» հասկացությունն ուսումնասիրվել է շատ գիտնականների կողմից. արվեստաբաններ, մշակութաբաններ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, բանասերներ և այլոք: Մշակութաբանները բնորոշում են ավանդույթը որպես սոցիալական հիշողության հատուկ մեխանիզմ:

Ավանդույթների դերը անփոխարինելի է մշակույթում: Դարաշրջանների ստեղծագործական ներուժը բնորոշվում է ավանդույթների և նորարարությունների անքակտելի միասնությամբ [40, 26]:

Մ. Ա. Ռոզովի դիտարկմամբ՝ ավանդույթը սոցիալական փորձի պահպանման և փոխանցման հատուկ միջոց է, որն անցնում է մարդուց մարդ կամ սերնդից սերունդ, այսինքն այն սոցիալական ժառանգության առանձնահատուկ մեխանիզմ է, որն իր գոյատևման ընթացքով հիշեցնում է լճակի մակերևույթի երկայնքով շարժվող ալիքի [50, 8]:

Ավանդույթը նման է ալիքի, որն անցնելով որևէ հարթությունով, անկախ է նրանից:

Ավանդույթը որպես սոցիալական ծրագիր տարբերվում է.

- իր բնույթով (պարզ և բարդ),
- մշակույթում ծագման իր ձևով (բնականորեն ձևավորվող և արհեստականորեն ստեղծվող),
- գոյատևման ժամանակով (երկարատև և կարճատև),
- փորձարարական ներուժով,
- նյութականից կախվածության աստիճանով:

Ավանդույթները կարելի է խմբավորել հետևյալ կերպ. ավանդույթներ՝ կապված մարդկանց անձնական կյանքի հետ (երեխայի ծնունդ, հարսանիք, ամուսնություն, հարսանեկան հանդիսություն և այլն) և պետական ավանդույթներ՝ ազգային տոներ, կրոնական տոներ, հասարակական տոնախմբություններ, ավանդական հանդիսավորություններ և ծիսակատարություններ:

Ինչ վերաբերում է տոներին, ապա տոներն առաջացել են մարդկության զարգացման հետ համընթաց: Տոնը մշակույթի առաջնային և կարևոր ձևերից է [10, 311]:

Ա. Ի. Մազաևը բնորոշում է տոնը որպես ազատ ապրելակերպ, երբ ազատ ժամանակի և տարածության մեջ իրականանում է կամավոր հավաքված մարդկանց կենդանի հաղորդակցությունը [41, 206]:

Տոնը ազգային հանգստի ավանդական ձև է, որ բավարարում է մարդկանց պահանջմունքները զանգվածային հաղորդակցման ընթացքում և որի մեջ միախառնված են մշակույթի բոլոր ձևերը [81, 136]:

Տոնի իմաստի տակ կարելի է հասկանալ նաև ազատ ժամանակ, հանգիստ, տոնախմբություն և ծիսակատարություն [24, 96]:

Այսպիսով, տոները առօրյայից տարբերվող, որոշակի կանոններով սահմանված հասարակական իրողություններ են, որոնք կրում են հանդիսավոր բնույթ ոչ աշխատանքային օրերին:

Այս համատեքստում առանցքային է օտար լեզվի ուսուցման գործընթացում տոների ու ավանդույթների վերաբերյալ դասանյութերի ընտրությունը դասագրքերում: Ուստի ըստ հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշի՝ միջին դպրոցում վերը նշված թեմաները նախատեսված են հետևյալ դասարաններում ուսուցանելու համար.

- 5-րդ դասարան. տոներ (մայրիկների տոն),
- 6-րդ դասարան. Հայաստան. տոներ (Նոր տարի և Սուրբ ծնունդ),
- 8-րդ դասարան. երկիրը, որի լեզուն սովորում եմ (սովորույթներ, ավանդույթներ, ազգային տոներ) [6, 23-24]:

Ինչպես պարզ դարձավ միջին դարոցի 7-րդ և 9-րդ դասարանների դասագրքերում նախատեսված չէ տոների և ավանդույթների ուսուցումը: Սակայն տվյալ թեմաները կարելի է բավականին խորն ուսումնասիրել արդեն նշված դասարաններում:

Հետևաբար ուսումնասիրեցինք միջին դարոցում գործող 5-րդ, 6-րդ և 8-րդ դասարանների դասագրքերը և կատարեցինք համապատասխան եզրահանգումները:

Գ. Գասպարյանի 5-րդ դասարանի դասագրքում ներառված են բավականին ծավալուն տեքստեր՝ տարբեր թեմաներով: Էջ 84-ում տրված է "Christmas Tree", իսկ էջ 87-ում "Christmas Shopping" թեմաները: Կարելի էր նախապես տոնի վերաբերյալ դասանյութ մշակել, որից հետո անդրադառնալ տոնածառի կամ Ծննդյան գնումների մասին պատմող ուսումնական նյութերին:

Լ. Գրիգորյանի դասագրքում ընդգրկված է Սուրբ ծննդի վերաբերյալ վարժությունների համակարգ. Match the pictures with the Christmas words. Can you unjumble the words? Find as many Christmas words as you can and win. Fill the gaps with the words from the box. Նաև աշակերտներին ներկայացվում են նամակագրության գեղեցիկ օրինակներ:

Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից առանցքային է նաև գրավոր խոսքի դերը, որի նպատակն է աշակերտների հիշողության մեջ ամրապնդել բառեր, արտահայտություններ, նախադասություններ: Շատ մեթոդիստներ (Մ. Գ. Աստվածատրյան, Գ. Վ. Ռոզովա, Ե. Ի. Պասսով) հավատացած են, որ օտար լեզու սովորելու և ուսուցանելու գիտակից մոտեցումը երաշխավորում է աշակերտների առաջադիմությունը գրավոր խոսքում [2], [49], [45]:

Գրավոր խոսքի այս տեսակը՝ նամակագրությունը, մի շարադրանք է, որտեղ աշակերտները պետք է գրառեն իրենց սեփական մտքերը: Ուստի, աշակերտների առջև ծառանում են մի շարք դժվարություններ՝ նրանց հիշողության մեջ պաշարված սահմանափակ գիտելիքների շրջանակում ճիշտ բառեր, քերականական ձևեր և կառուցվածքներ ընտրելու տեսանկյունից: Ի վերջո, օտար լեզվի գրավոր խոսքում առաջադիմության կարելի է հասնել այն դեպքում, երբ աշակերտներն ունեն համապատասխան գիտելիքներ և բառապաշար:

Դասագրքում անդրադարձ կա նաև մայրերի տոնին, որ նշվում է Բրիտանիայում "Mother's day in Britain"[109, 149]:

Սակայն այս տոներին զուգահեռ կարելի էր ներառել թեմաներ հայկական նմանատիպ տոների վերաբերյալ և պարզ հարցերի միջոցով կատարել քննարկում, որը կնպաստեր աշակերտների միջմշակութային կոմպետենցիայի զարգացմանը:

Գ. Գասպարյանի 6-րդ դասարանի դասագիրքը չի պարունակում տոներին և ավանդույթներին վերաբերող որևէ տեղեկատվություն:

Մինչդեռ Լ. Գրիգորյանի նույն դասագրքում, ինչպես նախորդ դասագրքում, 2-3 դասաժամ հատկացված է Նոր տարվան և Սուրբ ծննդին, այս անգամ ընդլայնված տարբերակով [108, 87]:

Միգուցե այս պարագայում կիրառվել է պարբերականության սկզբունքը, սակայն 2-3 դասաժամի շրջանակներում կարելի էր ներառել լեզվանյութ հայկական նմանատիպ տոների վերաբերյալ, որը կհամապատասխաներ չափորոշչով նախատեսված դրույթներին:

Ինչ վերաբերում է Գ. Գասպարյանի 8-րդ դասարանի դասագրքին, ապա միայն մեկ թեմայով՝ "Holidays and Customs", տրվում է հակիրճ տեղեկատվություն Բրիտանիայում նշվող մի շարք տոների վերաբերյալ [105, 80-82]:

Ընդ որում, մեկ դասաժամի ընթացքում միանգամից մի քանի տոնին անդրադառնալն արդյունավետ չէ և աշակերտների մոտ չի ստեղծի ցանկալի պատկերացում հատկապես այնպիսի տոների մասին, որոնք չեն տոնվում մեր երկրում կամ ունեն տարբեր ավանդույթներ (օր.՝ Halloween):

Ուստի ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից ցանկացած դասանյութ պետք է մատուցել յուրովի և ինքնատիպ՝ հաշվի առնելով աշակերտների անհատական հետաքրքրությունները: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է անգլախոս երկրներում և Հայաստանում նշվող տոներին, որոնք շատ բազմազան են, և այս տոներն ուսուցանելիս առավել ուշադրություն պետք է դարձվի տվյալ տոնը բնորոշող խորհրդանիշների, ինչպես նաև տոնի նախապատմության և առկա սովորույթների վրա:

Լ. Գրիգորյանի 8-րդ դասարանի դասագրքի 7-րդ բաժինն ամբողջությամբ վերաբերում է անգլիական և ամերիկյան տոներին և ավանդույթներին [110; 118]: Այս բաժնում աշակերտները ուսումնասիրում են այնպիսի տոներ, ինչպիսին են՝ Սուրբ Վալենտինի օր, Անկախության օր, Շնորհակալության օր, Հելովին, ապրիլյան կատակի օր: Էջ 124-ում տրված է նաև Կանադայի Կուբեք քաղաքում նշվող ծմեռային կառնավալի վերաբերյալ տեղեկություններ: Տոներին հաջորդում են մի շարք ավանդույթներ ներկայացնող նյութեր, որոնք շատ հետաքրքիր են: Օրինակ՝ աշակերտները տեղեկանում են Լոնդոնի Հայդ Պարկի բարձրախոսների անկյան մասին, թե ինչու են անգլիացիները թեյի հետ կաթ խմում կամ ինչու են բրիտանացիները մեքենաները վարում ձախից և այլն: Դասագիրքը տոների և ավանդույթների տեսանկյունից բավական հագեցած է: Ցանկալի էր այս նյութերին զուգահեռ 1-2 հայկական տոն կամ ավանդույթ ներկայացվեր, որը կնպաստեր միջմշակութային կոմպետենցիայի զարգացմանը:

Այս համատեքստում, անշուշտ, հարկ է դասագրքերում անդրադառնալ երկու երկրների տոներին և ավանդույթներին, ներմուծել բազմաբովանդակ տեղեկատվություն և վարժությունների համակարգ, կատարել համեմատություններ և վերլուծություններ, քանի որ վերը նշված թեմաները շատ հետաքրքիր են և բազմազան:

Օրինակ՝ ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից արդյունավետ է միջին դպրոցի աշակերտներին իրազեկել այնպիսի կարևոր տոների մասին, ինչպիսիք են՝ Նոր տարին, Սուրբ ծնունդը, Սուրբ զատկի տոնը, “Halloween”-ը, Մայրության տոնը և այլն, ինչպես նաև ուսումնասիրել անգլախոս երկրների և մայր երկրի ավանդույթները:

“Halloween”-ը տարվա յուրօրինակ և տպավորիչ տոնն է թե՛ Միացյալ Նահանգներում, թե՛ Բրիտանիայում: Թեմայի վերաբերյալ կարելի է հետաքրքիր փաստեր մեջբերել և աշակերտները կկարողանան ամբողջական պատկերացում կազմել տոնի մասին, քանի որ մեր երկրում չունենք նմանատիպ տոն:

Տոնի հետ կապված տեղեկատվություն ուսուցիչը կարող է տրամադրել համակարգչի օգնությամբ, քանի որ ինչպես փաստում են հայ որոշ մեթոդիստներ

(Աստվածատրյան Մ., Թերզյան Գ. և այլք) նոր տեխնոլոգիաների և ինտերնետի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի հաղորդման և յուրացման հնարավորությունները՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը [3]:

Մայրության տոնը (Mother's Day) անգլախոս երկրներում նշվում է մայիսի երկրորդ կիրակի օրը, Անգլիայում՝ մեծ պասի չորրորդ կիրակի օրը: Այն համապատասխանում է մեր երկրում նշվող Մայրության և գեղեցկության տոնին: Տոնը յուրօրինակ կերպով մատուցելու համար ուսուցիչը կարող է կիրառել ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կզարգացնեն աշակերտների թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը:

Նոր տարին և Սուրբ ծնունդը Հայաստանում նշվող ամենասպասված տոներից են: Աշակերտներն օտար լեզվով տեղեկություններ կարող են ստանալ տոների հետ կապված բազմաթիվ հետաքրքիր ավանդույթների վերաբերյալ:

Մինչդեռ Չատկի տոնը (Easter) Մեծ Բրիտանիայում, ինչու չէ նաև Հայաստանում ամենագունեղ տոնն է: Աշակերտներն հնարավորություն կունենան ոչ միայն տեղեկատվություն ստանալու տոնի վերաբերյալ, այլև նրանց մեջ կձևավորվի գեղագիտական ճաշակ: Նրանք զննական պարագաների (նկարներ, տեսանյութեր) միջոցով սովորում են, թե ինչպես կարելի է գեղեցիկ սեղան պատրաստել գույնզգույն ներկված ձվերով, աճեցված խոտերով, կոնֆետ-նապաստակներով, որ Չատկի խորհրդանիշներից մեկն է անգլախոս երկրներում:

Հետևաբար, հաշվի առնելով վերը նշված թեմաների կարևորությունը դասագրքերում՝ մշակեցինք մեթոդական համակարգ՝ հիմք ընդունելով առարկայական չափորոշիչը: Մշակված ուսումնական նյութերը, որ նախատեսված են 5-րդ, 6-րդ և 8-րդ դասարանների համար և հիմնականում միտված են զարգացնելու աշակերտների ճանաչողական-հաղորդակցական կարողությունները, կարելի է ներառել վերը նշված դասագրքերի չափորոշչով հատկացված ենթաբաժնում: Դասանյութերը մշակելիս, չի անտեսվել նաև հեռահաղորդակցման միջոցների կիրառումը դասապրոցեսին:

6-րդ դասարան

THEME:

NEW YEAR AND CHRISTMAS

Task 1. Study the active vocabulary:

feast		to commemorate		luxurious
	baptism		desire	
to fulfil		delight		to look forward to
	existence		decoration	
joy		exchange presents		

Task 2. Read the texts, translate, summarize and retell:

NEW YEAR AND CHRISTMAS IN ARMENIA

The customs and traditions that are connected with New Year are the evidence of how the nations and the peoples of our planet are alike and at the same time different. The New Year celebration in Armenia differs greatly from that of other nations. It's one of the favourite holidays of Armenians which is celebrated on December 31. This holiday is very beautiful and brings joy and delight. Armenians get prepared for New Year for several weeks thus doing the shopping and getting ready for that special day. On those days one can notice so many people doing the shopping in the shops and markets. Everybody hurries to do his shopping, everybody wants to lay nice and luxurious table. The traditional Armenian dolma and gata are the decorations of the table. On this holiday people visit each other and exchange presents. Especially children look forward to New Year. They believe in the existence of Santa Clause, so they write letters to him previously, wishing to get a toy present, whereas grown-ups expect their wishes and hopes to be fulfilled in the New Year.

The Armenian Church celebrates the holy birth (Christmas) of Jesus Christ on January 6. It's the day of a major feast in the Armenian Church. A ceremony called "Blessing of Water" is conducted in the Armenian Church to commemorate Christ's Baptism.

On Christmas Eve, Armenians eat a traditional fish dish called trout. For dessert they have dried fruit and nuts. On Christmas, family and friends gather for the large family meal. Meat is finally introduced, often in the form of traditional Armenian lamb and rice dish.

NEW YEAR AND CHRISTMAS IN GREAT BRITAIN

It is commonly believed that New Year's Day is less important in England than Christmas. It is true in the southern and eastern parts of the country. But the welcoming of the New Year is popular among younger people who prefer to spend Christmas with family, but New Year with friends.

For most British families, Christmas is the most important festival of the year. There are a lot of traditions connected with Christmas but the most important one is the giving of presents. Family members wrap up their gifts and leave them at the bottom of the Christmas tree.

At some time on Christmas Day the family will sit down to a big turkey dinner followed by Christmas pudding.

Most families decorate their houses with brightly-coloured paper or holly, and they usually have a Christmas tree in the corner of the room, glittering with coloured lights and decoration. 26th December is also a public holiday, called Boxing Day.

This is the time to visit friends and relatives or be a spectator at one of the many sporting events.

Task 3. Use the T-chart method and try to guess which culture the given words belong to.

Stockings, rice dish, mistletoe, pudding, fish dish, turkey, dolma, Christmas Eve, carols, dried fruit, luxurious table.

For example:

English New Year, Christmas	Armenian New Year, Christmas
holly	lamb dish

Task 4. Read the given sentences and decide whether they are Armenian or British traditions or they belong to two cultures.

1. As soon as the clock in the midnight rings twelve, everyone greet each other by hugs and kisses.
2. On this holiday people visit each other and exchange presents.
3. There is a tradition of 'burning of bush', which is considered to be a symbol of burning of all past evils and making a new beginning.
4. Without the presence of the pork ham there is no feeling of New Year.
5. Children leave long socks near their bed hoping that Father Christmas will come at night and bring them small presents, fruits and nuts.
6. In the evening the family will sit down to a big turkey dinner followed by Christmas pudding.

Task 5. Match the two parts of the sentences.

- | | |
|-------------------------------|-----------------------------------|
| 1. On this holiday people | a. usually exchange presents. |
| 2. Armenians like to lay | b. in the Armenian Church. |
| 3. Children believe in | c. nice and luxurious tables. |
| 4. Christmas is a major feast | d. dried fruit and nuts. |
| 5. For dessert they have | e. the existence of Santa Clause. |

Task 6. Guess the riddles.

My life can be measured in hours,
I live by being devoured.
Thin I am fast, fat I am slow
The wind is always my foe.

It's blue by night,
By day it's white.
It is cold and not dry,
It falls from the sky.

I come with cold and snow.
But you like me and know.

Task 7. Study the lyrics and sing the song in chorus.

Jingle Bells

Dashing through the snow	Oh, jingle bells, jingle bells
On a one horse open sleigh	Jingle all the way
O'er the fields we go,	Oh, what fun it is to ride
Laughing all the way	In a one horse open sleigh
Bells on bob tail ring,	Jingle bells, jingle bells
Making spirits bright	Jingle all the way
What fun it is to laugh and sing	Oh, what fun it is to ride
A sleighing song tonight.	In a one horse open sleigh.

Task 8. Read some facts about New Year.

Did you know that...?

... the Babylonians were the first to have New Year's desires, and people all over the world have been breaking them ever since? The early Christians believed the first day of the new year should be spent reflecting on past mistakes and improving oneself in the new year.

Task 9. Watch a small part from the film “The Search for Santa Paws” and translate it with the help of your teacher.

Ց-րդ դասարան

Theme:

British Traditions and Customs

Task 1. Read the given texts, about the British traditions, translate them and try to match the titles.

Worm Charming

Swan Upping

The Trooping of the Colour

The Queen is the only person in Britain with two birthdays. Her real birthday is on April 21st, but she has an “official birthday”, too. That is on the second Saturday in June. And on the Queen’s official birthday, there is a traditional ceremony called the Trooping of

the Colour. It is a big parade with brass bands and hundreds of soldiers at Horse Guard's Parade in London. Thousands of Londoners and visitors watch in Horse Guard's Parade. And millions of people at home watch it on television. This custom is not very old, but it is for very old people.

There is a special royal tradition in England. On the River Thames there are hundreds of swans. A lot of these beautiful white birds belong, traditionally, to the king or queen. In July the young swans on the Thames are about two months old. Then the Queen's swan keeper goes, in a boat, from London Bridge to Henley. He looks at all the young swans and marks the royal ones. The name of this strange, but interesting custom is Swan Upping.

Worm charming is a way of attracting earthworms from the ground. Many do it to collect bait for fishing. But there are also those who do it as sort of sport. The village of Willaston, near Nantwich, Cheshire is the place where since 1980 the annual World Championships have been organized. The competition was actually initiated by local man Tom Shufflebotham who on the 5th of July, 1980 charmed 511 worms from the ground in only half an hour. The competition has 18 rules. Here are just few of them. Each competitor competes in the 3 x 3 meters area. Music of any kind can be used to charm worms out of the ground. No drugs can be used! Water is considered to be a drug (stimulant).

Task 2. Try to match the meanings of the given words and expressions.

- | | |
|---------------------------|-----------------------|
| 1. brass bands | a. հրապուրել |
| 2. earthworm | b. փողային նվագախումբ |
| 3. charm | c. նախաձեռնել |
| 4. trooping of the colour | d. դրոշի ծածանում |
| 5. drug | e. թափափորական |
| 6. to initiate | f. անձրևորդ |
| 7. royal | g. դել |

Task 3. Change the nouns into adjectives. Find the appropriate adjectives in the texts.

<i>Noun</i>	<i>Adjective</i>
beauty	
tradition	
officer	
stranger	
charm	
kindness	
royalty	

Task 4. Watch videos about the traditions and retell one of them showing the facts on the screen.

Task 5. Read the British and Armenian customs and discuss them with your classmates.

British Customs

Almost every nation has a reputation of some kind. The English are reputed to be cold, reserved, rather haughty people. They are steady, easy-going and fond of sports. There are certain kinds of behavior, manners and customs which are peculiar to England.

The English are naturally polite and are never tired of saying “Thank you“ and “I am sorry”. They are generally disciplined, you never hear loud talk in the street. English people do not shake hands when meeting one another, they do not show their emotions even in tragic situations. They seem to remain good-tempered and cheerful under difficulties.

The love of gardens is deep-rooted in the British people. Most men's conversations are about gardens. It may be a discussion of the best methods of growing cucumbers, a talk about the plot which differs from all the others.

Britain is a nation of animal lovers. They have about five million dogs, almost as many cats, 3 million parrots and other cage birds, aquarium fish - and 1 million exotic pets such as reptiles. In Britain they have special dog shops selling food, clothes and other things for dogs. There are dog hair-dressing saloons and dog cemeteries there. There are special animal hotels at the airports. The English people believe that they are the only nation on the earth that is really kind to its animals.

Tea is part of the prose of British life, as necessary as potatoes and bread. Seven cups of it wake you up in the morning, 9 cups will put you to sleep at night.

Armenian Customs

Traditionally (especially in rural areas) Armenian families have a lot of children. A birth of a child, especially a boy, is a happy event which has always been welcome. The child is not shown to anybody but the relatives for 40 days after birth.

At the first meeting with a new acquaintance Armenians always shake hands – this is the most common way to salute. However, in case of real closeness and friendship male friends kiss each other while greeting or leave-taking. The same concerns to female friends. It may seem very strange to foreigners, but kissing is a symbol of the friendship and long acquaintance for Armenians.

Armenians are well-known for their hospitality and respect for foreigners. They are so glad to meet their foreign guests and try to do everything for making them feel as comfortable as possible and fall in love with Armenia. Many tourists after their visit remain impressed by this sincere attentiveness of the locals. For example, it won't be surprising at all, if complete strangers invite you to their apartment for treating delicious Armenian

dishes or volunteer to show you the city and the sights. In this case you don't need to be afraid of the selfish intentions, it is just a sign of hospitality.

Armenians are very attentive to kids in the streets as well. So, if you travel to this country with your infants, expect special attitude to your kids from total strangers. Sometimes they can start talking to your child, asking questions or complimenting his or her cuteness. You don't have to worry- it's an expression of affection toward your children, nothing dangerous.

Task 6. Match the questions to their answers.

1. How can you describe the English character?
2. What do most Englishmen like to talk about?
3. How do the English behave in the street?
4. Is Britain considered a nation of animal or bird lovers?
5. How do the Armenians usually greet each other?
6. How do the Armenians treat the foreigners?
 - a. Most men's conversations are about gardens.
 - b. They are so hospitable and show respect for them.
 - c. In fact they are fond of animals.
 - d. They are used to shaking hands.
 - e. The English are cold, reserved, rather haughty people.
 - f. The English never talk loudly in the street.

Task 7. Write the Armenian and English traditions and customs using Venn's diagram.

5-րդ դասարան

THEME

MOTHER'S DAY

(տե՛ս հավելված 1)

Մեր կողմից մշակված նյութերը ուսուցիչը կարող է դասագրքի հետ զուգահեռ կիրառել դասապրոցեսին: Սակայն ինչպես հայտնի է, միջին դպրոցում ըստ օրինակելի ուսումնական պլանի օտար լեզվին հատկացվում է շաբաթական երկու դասաժամ: Այս պարագայում խնդիրը բարդանում է, քանի որ երկու դասաժամի դեպքում գործնականորեն հնարավոր չէ դասագրքից զատ այլ լրացուցիչ գործունեություն ծավալել: Սակայն շատ դեպքերում օտար լեզվին հատկացվում է դպրոցական բաղադրիչի ժամաքանակից, որն էլ հնարավորություն կտա մանկավարժներին օգտվել այլ ուսումնական ձեռնարկներից և լրացուցիչ նյութերից:

Հետևաբար կարելի է գալ այն համոզման, որ տոների և ավանդույթների վերաբերյալ դասանյութերը նպաստում են աշակերտների համապատասխան գիտելիքների համալրմանը: Ուստի ուսուցիչների միակ ելքը մնում է այն, որ գործնական խնդիրներ առաջադրելով՝ ավելի արդյունավետ կազմակերպեն միջմշակութային հաղորդակցության ուսուցման գործընթացը: Ն. Դ. Գալսկովայի, Վ. Վ. Սաֆոնովայի, Սիսուկի, Ս. Գ. Տեր-Մինասովայի աշխատանքները հնարավորություն են տալիս քննության առնելու միջմշակութային հաղորդակցության ուսուցման տարբեր հայեցակետերը [18], [51], [91], [56]:

2.4. Ուսուցման գործընթացում անգլերենի դասագրքերի արդյունավետության փորձարարական ստուգումը

2.5.

Ակնհայտ է, որ միջմշակութային հաղորդակցության զարգացման տեսանկյունից անգլերենի դասագրքերը պետք է պարունակեն հարուստ ուսումնական նյութ անգլախոս երկրների և Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի վերաբերյալ: Ցանկալի է, որ աշակերտները հնարավորություն ունենան համեմատել Հայաստանի և Անգլիայի համապատասխան երևույթները: Ինչպես ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ 5-9-րդ դասարանների դասագրքերում կան մի շարք բացթողումներ՝ կապված անգլախոս երկրների և Հայաստանի մշակույթներին, տոներին և ավանդույթներին վերաբերող տեղեկատվության հետ: Կարևորելով վերը նշված դասանյութերի ուսուցումը՝

իրականացրեցինք փորձարկում և թեստի միջոցով պարզեցինք աշակերտների միջմշակութային կոմպետենցիայի մակարդակը միջին դպրոցում:

Փորձարկումն իրականացվեց 2013-2014 ուսումնական տարում: Աշակերտները ընտրվեցին Գյումրու թիվ 5, 6, 7, 9, և 31 հիմնական, ինչպես նաև Մայիսյանի միջնակարգ դպրոցներից: Գյումրու թիվ 5, 6, 7, 9 և 31 դպրոցներում անգլերենն ուսուցանվում էր Գ. Գասպարյանի դասագրքով, մինչդեռ Մայիսյանի դպրոցում՝ Լ. Գրիգորյանի դասագրքով: 9-րդ դասարաններից ընտրվել են 200 աշակերտներ և բաժանվել փորձարարական (100 աշակերտ) և ստուգողական (100 աշակերտ) խմբերի: Փորձարարական ուսուցման նպատակն էր կիրառել մշակված միջմշակութային հաղորդակցության զարգացման արդյունավետությունը ապահովող հայեցակերպը և մեթոդիկան, ինչպես նաև բացահայտել միջին դպրոցում սովորողների միջմշակութային հաղորդակցական կարողությունները:

Ստորև ներկայացնում ենք հարցաշարը՝ բաղկացած 20 հարցից, որոնց կազմման համար հիմք է հանդիսացել միջմշակութային հաղորդակցության զարգացման հայեցակերպը: Հարցաշարի միջոցով ստուգվելու էր աշակերտների միջմշակութային կոմպետենցիան, վերջիններիս ձեռք բերած միջմշակութային հաղորդակցության կարողությունները: Հարցերից 10-ը վերաբերում էին դասագրքում տեղ գտած անգլախոս երկրների պատմամշակութային փաստերին և ևս 10-ը՝ դասագրքից դուրս մայրենի լեզվի մշակույթին: Տրամադրած հարցերին աշակերտները պատասխանելու էին՝ ընտրելով նշված չորս տարբերակից մեկը: (Տե՛ս հավելված 4)

Թեստային առաջադրանքի համար սահմանվեց 45 րոպե: Առաջադրանքի ավարտից հետո ուսումնասիրվեցին և համեմատվեցին ստուգողական և փորձարարական խմբերի հարցաթերթերը: Ստացված արդյունքները ներկայացված են ստորև.


**ՄՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄԻՑ ԱՌԱՋ**

№	Նշված տարբերակները	Ստուգողական խումբ			Փորձարարական խումբ		
		Աշակերտների քանակը	Ընտրած տարբերակը	%	Աշակերտների քանակը	Ընտրած տարբերակը	%
1.	Orly and Charles de Gaulle	100	11	11%	100	20	20%
	Tegel and Tempelhof	100	34	34%	100	24	24%
	Heathrow and Gatwick	100	27	27%	100	21	21%
	Newark and LaGuardia	100	28	28%	100	35	35%
2.	The Thames	100	31	31%	100	36	36%
	The Nile	100	34	34%	100	17	17%
	The Mississippi	100	19	19%	100	20	20%
	The Severn	100	16	16%	100	27	27%
3.	It was in 1667.	100	23	23%	100	27	27%
	It was in 1766.	100	13	13%	100	22	22%
	It was in 1666.	100	35	35%	100	18	18%
	It was in 1676.	100	29	29%	100	35	35%
4.	It is a castle.	100	30	30%	100	16	16%
	It is a museum.	100	34	34%	100	32	32%
	It is a prison.	100	18	18%	100	25	25%
	It is a tower.	100	18	18%	100	27	27%
5.	is a big country.	100	9	9%	100	17	17%
	is not a big country.	100	55	55%	100	32	32%
	is an island.	100	15	15%	100	23	23%
	is a large city.	100	21	21%	100	28	28%

6.	cows.	100	20	20%	100	21	21%
	farms and sheep.	100	24	24%	100	25	25%
	farms and oxen.	100	31	31%	100	30	30%
	farm animals.	100	25	25%	100	24	24%
7.	Edinburgh	100	28	28%	100	26	26%
	Cardiff	100	24	24%	100	13	13%
	Glasgow	100	20	20%	100	31	31%
	London	100	28	28%	100	30	30%
8.	There lives a monster there with a name "Nessie".	100	36	36%	100	36	36%
	There lives a dinosaur there.	100	24	24%	100	16	16%
	There are many crocodiles there.	100	21	21%	100	20	20%
	There are no fish there.	100	19	19%	100	28	28%
9.	present their mothers with flowers.	100	23	23%	100	30	30%
	paint boiled eggs.	100	18	18%	100	21	21%
	send cards to somebody they love.	100	24	24%	100	27	27%
	put on witches' clothes.	100	35	35%	100	22	22%
10.	February 14 th .	100	43	43%	100	32	32%
	January 17 th .	100	26	26%	100	18	18%
	March 8 th .	100	13	13%	100	19	19%
	November 5 th .	100	18	18%	100	31	31%
11.	301 A.D.	100	30	30%	100	32	32%
	201A.D.	100	21	21%	100	39	39%
	501 B.C.	100	22	22%	100	19	19%
	301B.C.	100	27	27%	100	29	29%
12.	National Emblem	100	14	14%	100	31	31%
	National Assembly	100	19	19%	100	19	19%
	National Anthem	100	28	28%	100	25	25%
	National Flag	100	39	39%	100	33	33%
13.	apricot.	100	38	38%	100	41	41%
	pear.	100	13	13%	100	18	18%
	peach.	100	24	24%	100	22	22%
	apple.	100	25	25%	100	19	19%

14.	a pink city.	100	21	21%	100	29	29%
	a violet city.	100	15	15%	100	20	20%
	a city of the rich.	100	28	28%	100	25	25%
	a city of the poor.	100	36	36%	100	26	26%
15.	the national patron of loving hearts in Armenia.	100	32	32%	100	22	22%
	a soldier in the Armenian Army.	100	27	27%	100	20	20%
	the god of Love.	100	25	25%	100	29	29%
	the patron of newly married.	100	16	16%	100	29	29%
16.	winter months.	100	25	25%	100	15	15%
	spring months.	100	27	27%	100	29	29%
	summer months.	100	20	20%	100	28	28%
	autumn months.	100	28	28%	100	28	28%
17.	May 1- Labour day	100	36	36%	100	9	9%
	January 28- Army Day	100	17	17%	100	30	30%
	July 5- Constitution Day	100	27	27%	100	20	20%
	October 31- Halloween	100	20	20%	100	41	41%
18.	dolphins.	100	30	30%	100	29	29%
	fish trout.	100	34	34%	100	20	20%
	oil reserves.	100	18	18%	100	25	25%
	sandy beaches.	100	18	18%	100	26	26%
19.	Children's Day	100	20	20%	100	14	14%
	Women's Day.	100	24	24%	100	28	28%
	Mothers' Day.	100	30	30%	100	39	39%
	Fathers' Day.	100	26	26%	100	19	19%
20.	Martiros Saryan.	100	16	16%	100	21	21%
	Ivan Aivazovski.	100	37	37%	100	28	28%
	Minas Avetisyan.	100	17	17%	100	21	21%
	Ivan Shishkin.	100	30	30%	100	30	30%

**Սովորողների մշակութային գիտելիքների մակարդակը
փորձարկումից առաջ**



Արդյունքների ամփոփիչ վերլուծությունը ցույց տվեց, որ աշակերտների մեծ մասը սխալ են պատասխանել են նշված հարցերին՝ չտիրապետելով Բրիտանիայի, Շոտլանդիայի, ինչպես նաև Հայաստանի երկրագիտական տեղեկատվությանը: Մեր կարծիքով խնդիրը ոչ թե մեր աշակերտների՝ տվյալ երկրի մշակույթին, պատմությանը կամ տոներին ու ավանդույթներին ծանոթ չլինելն է, այլ խնդրո առարկա թեմաները ներկայացնելու համար անգլերենից բավարար իմացություն, գիտելիք չունենալը: Օրինակ՝ աշակերտները խոստովանեցին, որ նրանք ընդհանրապես չեն հասկացել 11-րդ, 12-րդ և 15-րդ հարցերի իմաստները, որտեղ 11-րդ հարցը վերաբերում էր քրիստոնեությանը, 12-րդ հարցը՝ Հայաստանի խորհրդանիշներին, իսկ 15-րդը՝ Սուրբ Սարգսին: Այս հարցերում նրանք հանդիպել են այնպիսի անծանոթ բառերի, որոնք թույլ չեն տվել հասկանալ հարցերի իմաստները՝ national patron, newly married, adopt, state religion, National Emblem, National Anthem, National Assembly: Կային նաև հարցեր, որոնց իմաստը դյուրըմբռնելի էր, սակայն աշակերտների մեծ մասը կրկին սխալվել էին: Օրինակ՝ 20-րդ հարցին «Ո՞վ հայ նկարիչ չէ» աշակերտները կարող էին արագ կողմնորոշվել՝ կարդալով նշված նկարիչների անունները, կամ կարդալով 12-րդ հարցը, նրանք պետք է գլխի ընկնեին, որ Հայաստանի հետ ընդհանրություն ունի նշված մրգերից միայն ծիրանը: Նույնը կարելի է ասել 18-րդ հարցի համար, որտեղ նշված տարբերակներից Սևանա լճի հետ կարող էր կապ ունենալ միայն իշխանը: Հավանաբար սխալներ թույլ տալու պատճառ կարող էր լինել անուշադրությունը:

Փորձարկման սկզբում բացահայտվել և գնահատվել են նաև աշակերտների միջմշակութային կոմպետենցիան զարգացնող մի շարք կարողություններ.

- ոչ համարժեք մշակութային իրողությունները բացահայտելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային խորհրդանիշները համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային իրադարձությունները համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների պատմական իրադարձությունները համեմատելու կարողություն,

- Հայաստանի և անգլախոս երկրների քաղաքական համակարգը համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների կրթական տարբերությունները բացահայտելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների աշխարհագրական տվյալները համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների պատմամշակութային եզրույթները բացահայտելու կարողություն,
- անհամարժեք բառապաշարը բացահայտելու ունակություն,
- բնագրային տեքստերը ընթերցելու և վերարտադրելու կարողություն:

Աշակերտների միջմշակութային կոմպետենցիան զարգացնող կարողությունները ստուգվել են 20 բալանոց համակարգով և գնահատվել ըստ տվյալ խմբի ցույց տված միջին արդյունքների: Ամեն մի կարողության փոփոխություն վերլուծվել է առանձին՝ հաշվի առնելով դրանց փոխադարձ կապը: Ընդհանուր արդյունքների համեմատությունը, որ ներկայացվում է աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 2

Ստուգողական և փորձարարական խմբերի արդյունքները

փորձարկումից առաջ

Կարողություններ	Ստուգող. խումբ	Փորձարար. խումբ
Ոչ համարժեք մշակութային իրողությունները բացահայտելու կարողություն	8	10
Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային խորհրդանիշները համեմատելու կարողություն	9	11
Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային իրադարձությունները համեմատելու կարողություն	10	11
Հայաստանի և անգլախոս երկրների պատմական իրադարձությունները համեմատելու կարողություն	12	10
Հայաստանի և անգլախոս երկրների քաղաքական համակարգը համեմատելու կարողություն	11	12
Հայաստանի և անգլախոս երկրների կրթական	8	10

տարբերությունները բացահայտելու կարողություն		
Հայաստանի և անգլախոս երկրների աշխարհագրական տվյալները համեմատելու կարողություն	13	12
Հայաստանի և անգլախոս երկրների պատմամշակութային եզրույթները բացահայտելու կարողություն	12	12
Անհամարժեք բառապաշարը բացահայտելու ունակություն	10	9
Բնագրային տեքստերը ընթերցելու և վերարտադրելու կարողություն	11	13
Միջին միավորը	10,4	11

Ստուգողական և փորձարարական խմբերի ցուցաբերած արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու խմբում էլ թույլ են զարգացած մշակութային բովանդակության գիտելիքները:

Ուստի դասագրքերում կարևորելով միջմշակութային կոմպետենցիան զարգացնող դասանյութերը՝ նույն դպրոցների աշակերտների հետ իրականացվեց փորձարարական աշխատանք, որը տևեց մեկ կիսամյակ: Այդ ընթացքում մեզ աջակցում էին նույն դպրոցների ուսուցիչներ՝ Մարինե Հովսեփյանը, Միրանյան Ամալյան, Բաղրամյան Քնարիկը, Հարոյան Անահիտը, Մարինե Գաբոյանը, Օֆելյա Սուլթանյանը: Փորձարարական խմբի հետ անցկացվում էին արտաժամյա պարապմունքներ շաբաթական երկու անգամ (ընդհանուր առմամբ 30 պարապմունք), մեկական ժամ տևողությամբ, որի ընթացքում աշակերտներին ուսուցանվում էր մեր կողմից մշակված ուսումնական նյութերը:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից պարապմունքների ընթացքում կարևորվել է հեռահաղորդակցման միջոցների կիրառումը: Հաճախակի իրականացվող էլեկտրոնային դասերի ընթացքում աշակերտները դիտում էին մշակութային բովանդակության կարճամետրաժ վավերագրական ֆիլմեր և ունկնդրում տեքստեր: Այս ամենը նպատակաուղղված էր ձևավորելու և զարգացնելու աշակերտների միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան:

Մայիս ամսվա վերջին արդեն աշակերտները պատրաստ էին լրացնելու մեր կողմից պատրաստած մեկ այլ հարցաշար, որի արդյունքում պարզ կլիներ կատարած աշխատանքի արդյունավետությունը: Հարցաշարն ընդգրկում էր 10 հարց Հայաստանի, ևս 10-ը՝ անգլախոս երկրների մասին: (Տե՛ս հավելված 5)

Ստացված արդյունքները ներկայացնում ենք ստորև.

ՄՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻՑ ՄՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


Աղյուսակ 3

№	Նշված փարբերակները	Ստրուգողական խումբ			Փորձարարական խումբ		
		Աշակերտների քանակը	Ընդրած փարբերակը	%	Աշակերտների քանակը	Ընդրած փարբերակը	%
1.	Ani	100	25	25%	100	10	10%
	Dvin	100	21	21%	100	8	8%
	Karin	100	26	26%	100	19	19%
	Kars	100	28	28%	100	63	63%
2.	Tashir	100	31	31%	100	72	72%
	Tavush	100	34	34%	100	13	13%
	Shirak	100	19	19%	100	7	7%
	Lori	100	16	16%	100	8	8%
3.	hard work	100	23	23%	100	68	68%
	faith	100	13	13%	100	9	9%
	wealth	100	35	35%	100	13	13%
	peaceful sky	100	29	29%	100	10	10%
4.	warm and damp	100	30	30%	100	12	12%
	mild and damp	100	34	34%	100	5	5%
	cool and dry	100	18	18%	100	12	12%
	hot and dry	100	18	28%	100	71	71%
5.	maize	100	9	9%	100	12	12%
	rice	100	55	55%	100	75	75%
	wheat	100	15	15%	100	7	7%
	oats	100	21	21%	100	6	6%
6.	Dilijan	100	20	20%	100	8	8%

	Armavir	100	24	24%	100	6	6%
	Gyumri	100	31	31%	100	81	81%
	Goris	100	25	25%	100	5	5%
7.	The Turnip	100	28	28%	100	60	60%
	The Liar	100	24	24%	100	15	15%
	Brother Axe	100	20	20%	100	16	16%
	The Travellers	100	28	28%	100	9	9%
8.	poems	100	36	36%	100	9	9%
	fairy tales	100	24	24%	100	7	7%
	fables	100	21	21%	100	5	5%
	historical novels	100	19	19%	100	79	79%
9.	Ivan Aivazovski	100	23	23%	100	73	73%
	Paul Gauguin	100	18	18%	100	12	12%
	Salvador Dali	100	24	24%	100	5	5%
	Karl Brullov	100	35	35%	100	10	10%
10.	blue	100	43	43%	100	68	68%
	green	100	26	26%	100	11	11%
	orange	100	13	13%	100	11	11%
	red	100	18	18%	100	10	10%
11.	Southern Ireland	100	30	30%	100	56	56%
	Northern Ireland	100	21	21%	100	13	13%
	England	100	22	22%	100	17	17%
	Wales	100	27	27%	100	14	14%
12.	England with Spain	100	14	14%	100	11	11%
	England with Italy	100	19	19%	100	15	15%
	the United Kingdom with Germany	100	28	28%	100	14	14%
	the United Kingdom with France	100	39	39%	100	62	62%
13.	Congo	100	38	38%	100	7	7%
	Amur	100	13	13%	100	6	6%
	Amazon	100	24	24%	100	6	6%
	Mississippi	100	25	25%	100	81	81%

14.	The Capitol	100	21	21%	100	71	71%
	The Tower of London	100	15	15%	100	4	4%
	The National Gallery	100	28	28%	100	10	10%
	The British Museum	100	36	36%	100	15	15%
15.	TV-set	100	32	32%	100	15	15%
	telephone	100	27	27%	100	68	68%
	telescope	100	25	25%	100	8	8%
	radio	100	16	16%	100	9	9%
16.	pumpkin	100	25	25%	100	57	57%
	plum	100	27	27%	100	22	22%
	pear	100	20	20%	100	14	14%
	pepper	100	28	28%	100	7	7%
17.	Happy Day	100	36	36%	100	4	4%
	Boxing Day	100	17	17%	100	76	76%
	Party Day	100	27	27%	100	13	13%
	Mistletoe Day	100	20	20%	100	7	7%
18.	deliver candies	100	30	30%	100	12	12%
	light bonfires	100	34	34%	100	64	64%
	gather money	100	18	18%	100	8	8%
	buy presents	100	18	18%	100	16	16%
19.	Somerset Maugham	100	20	20%	100	6	6%
	O'Henry	100	24	24%	100	4	4%
	Jerome K Jerome	100	30	30%	100	73	73%
	Mark Twain	100	26	26%	100	17	17%
20.	The artist and the shopkeeper	100	16	16%	100	56	56%
	The actor and the shopkeeper	100	37	37%	100	20	20%
	The artist and the butcher	100	17	17%	100	15	15%
	The actor and the artist	100	30	30%	100	9	9%

**Սովորողների միջմշակութային կոմպետենցիայի մակարդակը
փորձարկումից հետո**



Վերլուծելով ստուգողական խմբի աշակերտների արդյունքները՝ պարզեցինք, որ 1-ին հարցին ճիշտ էին պատասխանել 26 աշակերտ. «Ո՞րը Հայաստանի մայրաքաղաքներից չի եղել»: Պատմություն առարկայից հիշելով՝ նրանք ընտրել էին Կարին պատասխանը, մինչդեռ 74 աշակերտ ընտրել էին տարբեր անվանումներ:

2-րդ հարցին աշակերտները դժվարացել էին պատասխանել. «Ո՞րը Հայաստանի մարզ չէ»: Հարցին անհասկանալի իմաստ էր տվել «province» բառը, որի չիմացությունը խանգարել էր հարցի ճիշտ ըմբռնմանը: Այս խնդիրը վերաբերում է նաև 5-րդ հարցին: «Տոլման հայկական ավանդական կերակուր է, որ պատրաստվում է...» հարցին պատասխանելիս աշակերտները սխալվել էին տրված տարբերակները չընկալելու պատճառով: «Ո՞րը Հ. Թումանյանի հեքիաթներից չէ» հարցին աշակերտներից 72-ը տվել էին սխալ պատասխաններ: Հեքիաթների անգլերեն թարգմանությանը նրանք ծանոթ չէին, որն էլ շփոթեցրել էր նրանց: Օրինակ՝ Կացին ախպեր- Brother Axe, Սուտասանը- The Liar, Ճամփորդները- The Travellers.


9-րդ հարցին պատասխանելիս՝ հայ նկարիչներին ծանոթ չլինելով, 77 աշակերտ սխալվել էին: Ինչ վերաբերում է 10-20 հարցերին, ապա աշակերտները պատասխանելիս թերացել են տոներին և ավանդույթներին վերաբերող հարցերում: Օրինակ՝ 17-րդ հարցին ճիշտ պատասխանելու համար աշակերտներից պահանջվում էր «Christmas» տոնի ավանդույթների ստույգ իմացություն, ըստ որի տոնին հաջորդող օրը կոչվում է «Boxing Day», այսինքն նվերների օր: 18-րդ հարցը կապված էր «Guy Fawks» տոնի հետ, թե այդ օրն ի՞նչ են անում մարդիկ: Եթե աշակերտները տեղեկություն չունենան այս տոնի մասին, ապա այս դեպքում տրամաբանությունը չի օգնի:

Արդյունքների ամփոփիչ վերլուծությունը ցույց տվեց փորձարարական աշխատանքի արդյունավետությունը՝ հաշվի առնելով փորձարարական խմբի ցուցաբերած արդյունքների առավելությունը ստուգողական խմբի ցուցաբերած արդյունքների համեմատ: Կրկին անգամ ստուգողական խմբի աշակերտների մոտ նկատվեց թերացում ճիշտ պատասխաններ տալու այնպիսի հարցերին, որոնք վերաբերում էին դասագրքերում միջմշակութային կարողությունները զարգացնող թեմաներին:

Փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքները համեմատվում են փորձարարական աշխատանքի սկզբում և վերջում: Տրամագիրը պատկերված է ըստ վերը նշված 20 հարցերի:

Տրամագիր 3

Ստուգողական (100աշ.) և փորձարարական (100աշ.) խմբերի ամփոփիչ արդյունքները



Փորձարարական աշխատանքի ընթացքում մշակված տեքստերի և վարժությունների համակարգը ուղղված էր նաև զարգացնելու աշակերտների միջմշակութային հաղորդակցության կարողությունները, որոնք ստուգվեցին փորձարարական աշխատանքի վերջում: Արդյունքները ներկայացնում ենք աղյուսակի տեսքով:

**Միջմշակութային կոմպերենցիան զարգացնող
կարողությունների ձևավորվածության մակարդակների շարժընթացը
սրուգողական և փորձարարական խմբերում փորձարկումից հետո**

Կարողություններ	Սրուգողական խումբ	Փորձարարական խումբ
Ոչ համարժեք մշակութային իրողությունները բացահայտելու կարողություն	9	17
Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային խորհրդանիշները համեմատելու կարողություն	11	18
Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային իրադարձությունները համեմատելու կարողություն	10	17
Հայաստանի և անգլախոս երկրների պատմական իրադարձությունները համեմատելու կարողություն	9	17
Հայաստանի և անգլախոս երկրների քաղաքական համակարգը համեմատելու կարողություն	10	16
Հայաստանի և անգլախոս երկրների կրթական տարբերությունները բացահայտելու կարողություն	13	17
Հայաստանի և անգլախոս երկրների աշխարհագրական տվյալները համեմատելու կարողություն	12	18
Հայաստանի և անգլախոս երկրների պատմամշակութային եզրույթները բացահայտելու կարողություն	12	16
Անհամարժեք բառապաշարը բացահայտելու ունակություն	11	16
Բնագրային տեքստերը ընթերցելու և վերարտադրելու կարողություն	11	17
Միջին միավորը	10.8	16,9

**Փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքների
ամփոփիչ աղյուսակ**

Կարողություններ	Ստուգողական խումբ		Փորձարարական խումբ	
	Փորձարկ. առաջ	Փորձար. հետո	Փորձար. առաջ	Փորձարկ. հետո
Ոչ համարժեք մշակութային իրողությունները բացահայտելու կարողություն	8	9	10	17
Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային խորհրդանիշները համեմատելու կարողություն	9	11	11	18
Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային իրադարձությունները համեմատելու կարողություն	10	10	11	17
Հայաստանի և անգլախոս երկրների պատմական իրադարձությունները համեմատելու կարողություն	12	9	10	17
Հայաստանի և անգլախոս երկրների քաղաքական համակարգը համեմատելու կարողություն	11	10	12	16
Հայաստանի և անգլախոս երկրների կրթական տարբերությունները բացահայտելու կարողություն	8	13	10	17
Հայաստանի և անգլախոս երկրների աշխարհագրական տվյալները համեմատելու կարողություն	13	12	12	18
Հայաստանի և անգլախոս երկրների պատմամշակութային եզրույթները բացահայտելու կարողություն	12	12	12	16
Անհամարժեք բառապաշարը բացահայտելու ունակություն	10	11	9	16
Բնագրային տեքստերը ընթերցելու և վերարտադրելու կարողություն	11	11	13	17
Միջին միավորը	10,4	10.8	11	16,9

Այսպիսով, ստուգողական և փորձարարական խմբերի արդյունքների համեմատությունից պարզ դարձավ, ստուգողական խմբում աշակերտների առաջադիմության աճ գրեթե չի նկատվել, մինչդեռ փորձարարական խմբի աշակերտները առաջադիմել են միջինը 30 (29,5) տոկոս: Փորձարարական աշխատանքի վերջում փորձարարական խմբի արդյունքները գերազանցում են ստուգողական խմբի արդյունքներին: Հատկանշական է այն, որ աշակերտները հիմնականում գիտակցեցին միջմշակութային կոմպետենցիայի կարևորությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Այնուհետև դասագրքերում միջմշակութային կոմպետենցիան ապահովող դասանյութերի ընտրության տեսանկյունից հարցաշար մշակեցինք ուղղված ուսուցիչներին: Հարցմանը մասնակցել են Շիրակի մարզի տարբեր համայնքների, ինչպես նաև Գյումրու դպրոցներում դասավանդող 43 ուսուցիչ: Ուսուցիչներից 15-ը դասավանդում էին Լ. Գրիգորյանի, մնացած 28-ը՝ Գ. Գասպարյանի դասագրքերով: Ուսուցիչներին վաղօրոք հանձնարարվել էր ուսումնասիրել Լ. Գրիգորյանի և Գ. Գասպարյանի 5-9-րդ դասարանների անգլերենի դասագրքերը: Նշենք նաև այն, որ մարզում դպրոցների քանակը քիչ է, որտեղ դասավանդվում է Լ. Գրիգորյանի դասագրքերով:

Դպրոցների ուսուցիչներին ուղղված հարցաթերթիկ

1. Դասագրքերից զատ օգտվում եք այլ ձեռնարկներից:
 - ա) այո
 - բ) երբեմն
 - գ) ոչ
2. Տրամադրած դասաժամերը բավարարում են դասագրքերում ներմուծված դասանյութերն ամբողջությամբ ուսուցանելու համար:
 - ա) այո
 - բ) հազիվ
 - գ) ոչ

3. Արդյո՞ք դասագրքերում ներառված թեմաները համապատասխանում են առարկայական չափորոշիչներին:
- ա) այո
 - բ) մասամբ
 - գ) ոչ
4. Ինչպե՞ս եք գնահատում Գ. Գասպարյանի 5-9-րդ դասարանների անգլերենի դասագրքերում միջմշակութային հաղորդակցությունը զարգացնող նյութերի ընտրությունը:
- ա) վատ
 - բ) բավարար
 - գ) լավ
 - դ) գերազանց
5. Ինչպե՞ս եք գնահատում Լ. Գրիգորյանի 5-9-րդ դասարանների անգլերենի դասագրքերում միջմշակութային հաղորդակցությունը զարգացնող նյութերի ընտրությունը:
- ա) վատ
 - բ) բավարար
 - գ) լավ
 - դ) գերազանց
6. Արդյո՞ք Գ. Գասպարյանի դասագրքերը աշակերտներին հաղորդում են բավարար գիտելիքներ անգլիախոս երկրների տոների և ավանդույթների վերաբերյալ:
- ա) այո
 - բ) մասամբ
 - գ) ոչ
7. Արդյո՞ք Լ. Գրիգորյանի դասագրքերը հագեցած են անգլախոս երկրների տոների և ավանդույթների վերաբերյալ դասանյութերով:
- ա) այո

բ) մասամբ

գ) ոչ

8. Գ. Գասապոյանի դասագրքերը հագեցա՞ծ են հայկական տոների և ավանդույթների վերաբերյալ լեզվանյութերով:

ա) այո

բ) մասամբ

գ) ոչ

9. Հայկական տոների և ավանդույթների տեսանկյունից ինչպե՞ս կգնահատեք Լ. Գրիգորյանի դասագրքերը:

ա) վատ

բ) բավարար

գ) լավ

դ) գերազանց

10. Աշակերտներին հետաքրքրու՞մ են մշակութային բովանդակության տեղեկատվական նյութերը:

ա) այո

բ) մասամբ

գ) ոչ

11. Ի՞նչ եք կարծում մշակութային բովանդակության նյութի յուրացմանը նպաստում է վարժությունների ճիշտ ընտրված համակարգը:

ա) այո

բ) երբեմն

գ) ոչ

12. Կարևորու՞մ եք դասագրքերում երգերի և բանաստեղծությունների առկայությունը, որոնք զարգացնում են աշակերտների միջմշակութային կոմպետենցիան:

ա) այո

բ) մասամբ

գ) ոչ

Հարկ է նշել, որ «Դասագրքերից զատ օգտվում եք այլ ձեռնարկներից» հարցին 15 ուսուցիչ դրական պատասխան էին տվել: Տեղեկատվական վերելքի այս ժամանակաշրջանում, որքան էլ հազեցած լինի դասագիրքը, այնուամենայնիվ կարիքը կա այլ ձեռնարկներից օգտվելու, որոնք կօգնեն դասն առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնել: Հատկապես կարևորվում են մեթոդական ձեռնարկները, որոնք տրամադրում են բազմաբնույթ ինտերակտիվ խաղեր և նորարարական մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կներգրավվի դասապրոցեսին:

Առավել ուշագրավ են «Տրամադրված դասաժամերը բավարարում են դասագրքերում ներմուծված դասանյութերն ամբողջությամբ ուսուցանելու համար» հարցի պատասխանների արդյունքները: Ընդամենը 17 ուսուցիչ են դժգոհել քիչ ժամաքանակից, այն պարագայում, երբ միջին օղակում օտար լեզվին հատկացվում է 2 դասաժամ: Հավանաբար, այլ տարբերակ ընտրած ուսուցիչներին այդ օղակում հատկացվել է 2-ից ավել դասաժամ, որը տրամադրվել է նրանց ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչից:

10-րդ և 12-րդ հարցերին տրվել էին առավելագույն դրական պատասխանները, քանի որ ուսուցիչները հիրավի կարևորում են երգերի և բանաստեղծությունների դերը լեզվի ուսուցման գործում, ինչպես նաև փաստում են աշակերտների հետաքրքրասիրությունը դեպի մշակութային բովանդակության նյութերը:

Հատկանշական է «Հայկական տոների և ավանդույթների տեսանկյունից ինչպե՞ս կգնահատեք Լ. Գրիգորյանի դասագրքերը» հարցի պատասխանները, որտեղ 4 ուսուցիչ տվել էին բացասական պատասխան: Այստեղ նկատվում է նրանց կողմից դասագրքերի մանրամասն ուսումնասիրության պակասը, քանի որ Լ.Գրիգորյանի դասագրքերը բազմիցս անդրադառնում են հայկակն մշակույթին, տոներին և ավանդույթներին:

Տվյալները ներկայացնում ենք ստորև համապատասխան աղյուսակի տեսքով.

Ուսուցիչներին ուղղված հարցաշարից ստացված արդյունքներ

№	Հարցերի տարբերակները	Ուսուցիչների քանակը	Ընտրած տարբերակը	%
1.	ա) այո	43	15	34,9 %
	բ) երբեմն	43	22	51,2 %
	գ) ոչ	43	6	14,0 %
2.	ա) այո	43	4	9,3 %
	բ) հազիվ	43	17	39,5 %
	գ) ոչ	43	17	39,5 %
3.	ա) այո	43	10	23,3 %
	բ) մասամբ	43	9	20,9 %
	գ) ոչ	43	14	32,6 %
4.	ա) վատ	43	32	74,4 %
	բ) բավարար	43	2	4,7 %
	գ) լավ	43	9	20,9 %
	դ) գերազանց	43	0	0,0 %
5.	ա) վատ	43	3	7,0 %
	բ) բավարար	43	28	65,1 %
	գ) լավ	43	12	27,9 %
	դ) գերազանց	43	0	0,0 %
6.	ա) այո	43	11	25,6 %
	բ) մասամբ	43	10	23,3 %
	գ) ոչ	43	22	51,2 %
7.	ա) այո	43	10	23,3 %
	բ) մասամբ	43	29	67,4 %
	գ) ոչ	43	4	9,3 %
8.	ա) այո	43	5	11,6 %
	բ) մասամբ	43	28	65,1 %
	գ) ոչ	43	10	23,3 %
9.	ա) վատ	43	4	9,3 %
	բ) բավարար	43	12	27,9 %
	գ) լավ	43	25	58,1 %
	դ) գերազանց	43	2	4,7 %
10.	ա) այո	43	39	90,7 %
	բ) մասամբ	43	2	4,7 %
	գ) ոչ	43	2	4,7 %
11.	ա) այո	43	36	83,7 %
	բ) երբեմն	43	5	11,6 %
	գ) ոչ	43	2	4,7 %
12.	ա) այո	43	34	79,1 %
	բ) մասամբ	43	8	18,6 %
	գ) ոչ	43	1	2,3 %

Փորձարարական ստուգման ավարտին հարցումներ կատարեցինք նաև փորձարարական խմբի աշակերտների 22 ծնողի հետ: Հետաքրքրական էր, թե նրանք ինչ կարծիք ունեին կատարված աշխատանքի վերաբերյալ: Քննարկման ընթացքում նրանք պետք է պատասխաններին նախօրոք կազմած հարցերին՝ հաշվի առնելով իրենց երեխաների տեսակետները: Քննարկվող հարցերը ներկայացնում ենք ստորև.

Հարցեր ուղղված ծնողներին

1. Կարևորում եք օտար լեզվի լավ իմացությունն արդի պայմաններում:
2. Արդյո՞ք մեծ է մշակութային գիտելիքների դերը լեզվի իմացության մեջ:
3. Ձեր կարծիքով նոր սերնդի համար ավելի հասանելի՞ է մշակույթների երկխոսությունը:
4. Ձեր երեխաները երբևէ փորձե՞լ են հաղորդակցվել անգլախոս հասակակիցների հետ:
5. Ձեր երեխաները հաճույքո՞վ էին հաճախում արտաժամյա դասընթացներին:
6. Արտաժամյա դասընթացներին ի՞նչն էր նրանց առավել հետաքրքրում (տեքստերի քննարկումը, վարժությունների կատարումը, նոր մեթոդների կիրառումը, այլ կարծիք):
7. Ձեր երեխաների մոտ նկատե՞լ եք հայկական և բրիտանական մշակույթների հանդեպ հետաքրքրության աճ:
8. Եթե այո, ապա նրանց կողմից ինչպե՞ս է դրսևորվում հետաքրքրությունը (գրքեր կարդալով, հարցեր տալով, համակարգչով նյութեր ուսումնասիրելով, կամ այլ կերպ):
9. Ձեր երեխաները հարցեր տալի՞ս են հայկական և բրիտանական տոների և ավանդույթների վերաբերյալ:
10. Հաճա՞խ եք զրուցում ձեր երեխաների հետ մշակութային թեմաներով (երաժշտություն, գրականություն, ազգային արժեքներ և այլն):
11. Ինչպե՞ս եք գնահատում մեր կողմից կատարած աշխատանքը:

12. Ձեր երեխաները գո՞հ են հարցաշարի վերջնական արդյունքներից:

Քննարկման ընթացքում առավել ուշագրավ էր ծնողների դիտարկումները՝ կապված արտաժամյա դասընթացների անցկացման և իրենց երեխաների մեջ լեզվի և մշակույթի հանդեպ հետաքրքրություն առաջացնելու հետ: «Կարևորում եք օտար լեզվի լավ իմացությունը արդի պայմաններում», «Արդյո՞ք մեծ է մշակութային գիտելիքների դերը լեզվի իմացության մեջ», «Ձեր երեխաները հաճույքով էին հաճախում արտաժամյա դասընթացներին», «Ինչպե՞ս եք գնահատում մեր կողմից կատարած աշխատանքը» և «Ձեր երեխաները գո՞հ են հարցաշարի վերջնական արդյունքներից» հարցերին ծնողները դրական պատասխաններ տվեցին:

«Ձեր կարծիքով նոր սերնդի համար ավելի հասանելի՞ է մշակույթների երկխոսությունը» հարցը «Ձեր երեխաները երբևէ փորձե՞լ են հաղորդակցվել անգլախոս հասակակիցների հետ» հարցի տրամաբանական շարունակությունն է, ուստի այս հարցերի պատասխանները պետք է լինեն կամ բացասական, կամ դրական: Այս պարագայում անհասկանալի է 4 ծնողի տեսակետները, ովքեր առաջին հարցին տվել են բացասական, իսկ երկրորդին՝ դրական պատասխաններ:

